

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

ՄԻՆՉԵԻ ԵՐԲ
 (ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ
 ԵԼՈՅԹԻ ԱՌԹԻԿ)

ՏՕԳԹ. ՀԱՄԱԿԱՆ ՍԱՐԱՅԵԱՆ

Սերժ Սարգսեանի՝ անցեալ շաբաթ Մոսկուայի մէջ ըրած անխոհեմ եւ պարզամիտ յայտարարութիւնը այն մասին, որ ինքը դէմ է հայ-թրքական «Պատմական փաստերի ուսումնասիրման» յանձնախումբը կազմելու գաղափարին, արժանացաւ հայ ժողովուրդի գանազան հատուածներու արդարացի դատապարտումին: Թերեւս շատերու յիշողութեան մէջ թարմ է նաեւ, Ռոբերթ Քոչարեանի՝ 2001-ի Փետրուարին, Turkish Daily News-ին տուած հարցազրոյցին մէջ արտայայտած մէկ այլ միտքը այն մասին, որ Հայաստանի պետութիւնը իրական հիմքերուն վրէժնախնայեալ եւ հոգ պահանջելու:

Ի հարկէ, երկու արտայայտութիւններն ալ, իւրաքանչիւր հայտու համար իր իր ընդհանրացումներն ունենան, սակայն դատապարտելի է աւելի կարեւոր է գտնել անոնց ծնունդ տուող պարագաները: Իսկ այդ ընելու համար, առաջին հերթին հարկ է պարզել թէ վերջապէս, ինչպիսի՞նք է այսօր մեր ռազմավարութիւնը՝ ցեղասպանութեան հարցի եւ պահանջատիրութեան հետապնդման առումով, մանաւանդ Հայաստանի անկախացումէն 17 տարիներ անց:

Դժբախտաբար, որքան ալ անցանկալի ըլլայ իրականութիւնը, պիտի ընդունինք, որ ոչ մէկ յուրջ ֆայլ առնուած է այդ ուղղութեամբ: Այսինքն, առ այսօր՝ Սփիւռք եւ Հայաստանը, գործած են եւ կը գործեն իրարմէ անջատ, ըստ իրենց հայեցողութեան կամօրոյ պահանջին: Մէկ կողմէն, սփիւռքը տակաւին կառչած կը մնայ 1965-էն ի վեր որդեգրած մարտավարութեան, որ կարելի է ամփոփել հետեւեալ կերպով - Ամէն գնով պայքարի Ցեղասպանութեան նախնական համար, բայց միեւնոյն ատեն գրեթէ անտեսելով հատուցման եւ վերականգնման համար անհրաժեշտ որեւէ նախապատրաստական աշխատանք: Փաստօրէն, սփիւռքը քաջարձակապէս պատրաստ է յետնանաչման փուլին:

Միւս կողմէն, Հայաստանի անկախացումէն անմիջապէս յետոյ, Լեւոն Տէր-Պետրոսեանի վարչակարգը, Ցեղասպանութեան հարցը գիտակցաբար արտաքին քաղաքականութեան դաշտէն դուրս պահեց, զայն համարելով ոչ յարկ, նորանկախ Հայաստանի պետական շահերուն: Ատենին, ընդդիմախօսները այս պարագան համարեցին չափազանց վտանգաւոր եւ «Ապագային» քաղաքականութիւն, առանց սակայն կարենալ

**ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՎՏԱՆԳԱԴՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ՝
 ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ
 ՀԱՄԱՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
 ԶԱՅՐՈՅԹԻ ԵՒ ԴՏԱՊԱՐՏՈՒՄԻ ԱԼԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՍՓԻՒՔԻ ՏԱՐԱԾՔԻՆ**

Վերջերս Մոսկուա կատարած իր այցելութեան ընթացքին, Սերժ Սարգսեանի երկու տարբեր առիթներով կատարած վտանգաւոր յայտարարութիւնը՝ Հայկական Ցեղասպանութեան իրողութեան մասին, դատապարտումի լայն ալիք յառաջացուց, Հայաստանի եւ Սփիւռքի տարածքին:

Արդարեւ, Հայ Համայնքի հետ հանդիպման առթիւ եւ ապա ռուսաստանեան մամուլին տրուած հարցազրոյցի մը ընթացքին, Սերժ Սարգսեան յայտարարեց, թէ Հայաստանի համար ընդունելի է Թուրքիոյ առաջարկը՝ Հայոց Ցեղասպանութեան հարցը քննարկելու համար յանձնաժողով ստեղծելու վերաբերեալ, եթէ երկու երկիրներուն միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատուի եւ վերջ տրուի Հայաստանի շրջափակումին:

Հայկական Ցեղասպանութեան փաստը քննարկման առարկայ չդարձնելու վերաբերեալ հայտարարութեան ընդհանուր կեցուածքին հակառակ, Սերժ Սարգսեանի այս անակնկալ դիրքորոշումին դէմ

յայտարարութիւններով հանդէս եկան ոչ միայն ընդդիմադիր շրջանակները, այլեւ կարգ մը իշխանաւէտ կուսակցութիւններ:

Համաժողովրդական Շարժման կեդրոնի հրապարակած դատապարտումի յայտարարութեան մէջ ըսուած է. «Տասնամեակներ շարունակ համայն հայութիւնը ու մասնաւորապէս սփիւռքահայութիւնը իր ողջ ներուժն ու ջանքերը նուիրել է Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման ու դատապարտման խնդրին: Բազմաթիւ երկրների կառավարութիւններ արդէն իսկ ճանաչել են այն, որոշ տեղերում անգամ օրէնքով պատասխանատուութիւն է սահմանուած Հայոց Ցեղասպանութիւնը»

ուրացողների, ժխտողների համար: Թուրքիան, գործի դնելով իր դիւանագիտական ողջ կարողութիւնները, չկարողացաւ զսպել պատմական անսակարկելի այս իրողութեան ճանաչման շարունակուող գործընթացը եւ երկու տարի առաջ հանդէս եկաւ այդ շրջանի իրադարձութիւնների ուսումնասիրման համար պատմաբանների հայ-թուրքական մի յանձնաժողով ստեղծելու առաջարկութեամբ: Սա ակնյայտ մի ծուղակ էր, որին համաձայնելը արդէն իսկ պէտք է նշանակեր՝ զէթ առայժմ կասկածի տակ դնել Ցեղասպանութեան իրողութիւնը: Եւ այսօր Սերժ Սարգսեանը

Շաբ.ը էջ 4

ՆՈՐԱԳԻՐՆԵՐ՝ ՀՆՉԱԿԵԱՆ ՇԱՐՔԵՐԵՆ ՆԵՐՍ

Յունիսի 28-ին եռաբլուրում տեղի է ունեցել Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան նորագիւրների երդման արարողութիւնը: 35 նորընծայ հնչակեանների կազմում Կուսակցութեանը հաւատարմութեան երդում է տուել եւ Կուսակցութեան շարքերն է համալրել առողջապահութեան նախկին նախարար, ԱԺ 2003-2007 թ.-ի պատգամաւոր Արարատ Մկրտչեանը:

Ս.Դ. Հնչակեան ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՄԼՈՅ ԴԻՒԱՆ

**ԼԻԴԻՄԻԼԱ ՍԱՐԳՍԵԱՆ.-
 «ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ
 ԱՅՍՈՒՅԵՏԵԻ ՉՊԵՏՔ Ե
 ՈՐԵԻ ԱՎՆԿԱԼԻՔ
 ՈՒՆԵՆԱՅ ԵՐՈՂԱՅԻՑ»**



**ՄԴՆԿ ատենապետ
 Լիւդմիլա Սարգսեան**

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի վարչութեան ատենապետ Լիւդմիլա Սարգսեան Յունիս 28-ին ելույթ ունենալով «Ուրբաթ» ակումբէն ներս, մեղադրեց Եւրոպայի Խորհուրդը, որ չկարողացաւ 1609 բանաձեւի կատարման պահանջատէրը ըլլալ:

«Կամ հայաստանեան գործող

**ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ
 ԿԱՐԵՒՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՍԸ**

Հայաստանի առաջին նախագահ եւ Համաժողովրդական Շարժման առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեան, Յուլիս 1-ին հրապարակեց Մարտ 1-ին առնչուող գործի նախաքննութեան մարմնի՝ յատուկ քննչական ծառայութեան պետ Անդրանիկ Միրզոյեանի Մարտ 5-ի «քննչական յանձնարարականը», որ յղուած է Վայոց Ձորի մարզի դատախազին:

Ենթադրելով որ, այդ յանձնարարականը ուղարկուած է նաեւ Հայաստանի բոլոր մարզերու դատախազներուն, Տէր-Պետրոսեան զայն որակեց, մէկ կողմէ՝ «հրաշալի փաստաթուղթ, որը իշխանութեան էութիւնն է ցոյց տալիս», միւս կողմէ՝ «հրէշաւոր փաստաթուղթ, որով ապացուցուած է, որ մենք ապրում ենք բռնապետական պետութեան մէջ»:

Լեւոն Տէր-Պետրոսեանի կարծիքով, այդ «քննչական յանձնարարականը» ցոյց կու տայ, որ «չունեն ոչ մի կասկածեալ, ոչ մի ապացոյց, ոչ մի վկայ»:

Տէր-Պետրոսեանի հրապարակած փաստաթուղթին մէջ, կը յայտնուի, որ տուեալ քրէական գործի շրջանակէն ներս «անհրաժեշտութիւն է առաջացել Վայոց Ձորում Լեւոն Տէր-Պետրոսեանի նախընտրական շտաբների պետերին որպէս վկայ լրացուցիչ հար-



Լեւոն Տէր-Պետրոսեան ցոյց կու տայ իր տրամադրութեան տակ գտնուող փաստաթուղթը

ցաքննել, օրինակ, այսպիսի հարցադրումներով. - «Հանրահաւաքների ժամանակ ինչ էին խօսում օտարերկրեայ պետութիւնների կողմից ցուցաբերուող աջակցութեան մասին, յատկապէս՝ որ երկրների: Արդեօք հանրահաւաքների մասնակիցները չէին խօսում Հայաստանից Ռուսաստանի ներկայութիւնը հանելու օգտին: Հարցաքննել հանրահաւաքներին մասնակ-

Շաբ.ը էջ 4

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՈՒՐԱՑՄԱՆ ՈՒ ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ՈՐՈՎԱՅԹՆԵՐՈՒՄ

Հայ-թուրքական յարաբերութեան վերաբերեալ Սերժ Սարգսեանի յայտարարութիւնը, որ նա արեց Մոսկուա կատարած այցի ընթացքում, բաւական մեծ արձագանք գտաւ թէ Հայաստանում, թէ նաեւ արտերկրում: Ոմանք համարում են, որ Սերժ Սարգսեանը դաւաճանել եւ ուրացել է ազգային շահը, քանի որ կողմ է արտայայտուել պատմական փաստերի ուսումնասիրման հայ-թուրքական յանձնաժողովի ստեղծմանը, ոմանք էլ համարում են, որ նոր նախագահը զգալի առաջընթաց է արձանագրել իր նախորդի համեմատ: Այդպէս մասնաւորապէս կարծում է ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի օգնական Մեթիւ Բրայզան, ով հայ-թուրքական յարաբերութեան մասին Սերժ Սարգսեանի կարծիքը նոյնիսկ համարել էր անհաւանական թուացող առաջընթաց: Բազմազան կարծիքները հիմնականում տեղաւորում են այդ երկու ծայրայեղութիւնների մէջ՝ աննախադէպ ուրացում եւ անհաւանական առաջընթաց:

Սակայն հետաքրքրական է, որ դեռեւս չի եղել ամենից կարեւոր արձագանքը, որ թերեւս կարող է լինել Սերժ Սարգսեանի յայտարարութիւնից յետոյ: Խօսքը թուրք-իսլի մասին է: Այդ երկրի նախագահ Գիւլը մասնաւորապէս դեռ որեւէ արտայայտութիւն կարծես թէ չի արել Հայաստան-թուրքիա ֆուտպոլային խաղը միասին դի-

տելու Սերժ Սարգսեանի հրաւերի կապակցութեամբ, իսկ վարչապետ էրդողանն էլ դեռ չի արտայայտուել մի քանի տարի առաջ արուած իր առաջարկի վերաբերեալ Սերժ Սարգսեանի ներկայիս արտայայտած կարծիքի կապակցութեամբ: Խօսքը պատմական փաստերի ուսումնասիրման համատեղ յանձնաժողովի մասին է, որի առաջարկը էրդողանն արել էր Ռոբերդ Քոչարեանին, ով էլ ի պատասխան մերժել էր այդօրինակ յանձնաժողովի ստեղծման առաջարկը, հանդէս գալով հակադարձ առաջարկով՝ ստեղծել միջկառավարական

ճանապարհ: Հնարաւոր է նաեւ, որ Գիւլն ու էրդողանը տեղեակ չեն Սերժ Սարգսեանի յայտարարութիւններից: Բայց այդ դէպքում գոնէ Բրայզանի յայտարարութիւնից պէտք է որ տեղեակ լինէին եւ հետաքրքրուէին, թէ այդ ինչ է ասել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը, որ Բրայզան համարում է հայ-թուրքական յարաբերութեան առումով նախկինում անհնարին թուացող շրջադարձ: Հնարաւոր է նաեւ, որ թուրքիան պարզապէս որեւէ կարեւորութիւն չի տուել Սերժ Սարգսեանի յայտարարութեանը եւ իր լուրթեամբ

Իշխանութեան ձեւաւորման եւ ամրապնդման համար, թերեւս բաւարար չէ միայն ներքին դաշտում ընդգծել իր եւ Ռոբերդ Քոչարեանի տարբերութիւնը, ու անհրաժեշտ է այդ մարտավարութիւնը դուրս բերել արդէն միջազգային ասպարեզ

յանձնաժողով եւ քննարկել երկ-կողմ բոլոր հարցերը: Դժուար է իհարկէ ասել, թէ ինչով է պայմանաւորուած պաշտօնական Անքարայի լուրթիւնը: Միգուցէ Գիւլն ու էրդողանը հիմա նստած մտածում են, թէ արդեօք անկեղծ էր Սերժ Սարգսեանը, կամ արդեօք նրա յայտարարութեան տակ չկար դիւանագիտական խորամանկութիւն, որը թուրքիային կը ներքաշի մի գործընթացի մէջ, որից կարող է չլինել նահանջի

ցոյց է տալիս դա, թէեւ իհարկէ պէտք չէ մոռանալ, որ լուրթիւնը նաեւ համաձայնութեան նշան է: Այսպէս, թէ այնպէս, փաստն այն է, որ Սերժ Սարգսեանի յայտարարութեան հիմնական հասցեատէրը՝ թուրքիան, չի պատասխանում «նամակին» փոխարէնը պատասխանում է ով ասես: Սակայն, միւս կողմից, միայն Սերժ Սարգսեանին է երեւի թէ յայտնի, թէ ով էր իր խօսքի հիմնական հասցեատէրը՝ թուրքիան, թէ օրինակ

ԱՆԿԱՆ ԻՐԵՆԻՑ ԽՈՍՏՈՎԱՆԵՑ

Սերժ Սարգսեանի մոսկովեան այցը, բանից պարզուած է, շատ աւելի ծանր հետեւանքներ է ունեցել, քան Մեղվեղեւի սառը ընդունելութիւնն էր կամ «պատմական փաստերն ուսումնասիրելու» նպատակով հայ-թուրքական համատեղ յանձնաժողովի ստեղծման մասին յայտարարութիւնը: Բանն այն է, որ Սերժ Սարգսեանը նաեւ հարցազրոյց է տուել ռուսաստանեան «Կոմերսանտ» թերթին, որի ընթացքում, գիտակցաբար թէ ակամայ, մի շարք սենսացիոն բացայայտումներ է արել Մարտի 1-ի դէպքերի մասին:

Սերժ Սարգսեանը բառացիօրէն ասել է հետեւեալը. «Ուժ կիրառուել է ոչ թէ հանրահաւաքի մասնակիցների, այլ նրանց նկատմամբ, ովքեր ջարդուփշուր էին անում խանութները, կրակում էին ոստիկանութեան վրայ եւ ոստիկանների ու ներքին զօրքերի զինուորների վրայ նուսակներ էին նետում... Չեն եղել կրակոցներ հանրահաւաքի մասնակիցների վրայ, կրակոցները եղել են նրանցից մէկ կիրոմետր հեռու: Յուցարարներն էին ուժ կիրառում հասարակական կարգը պահպանել փորձող ոստիկանութեան հանդէպ»: Փորձենք վերլուծել այս մտքերը:

Ուշադրութիւն դարձրէք առաջին նախադասութեան վրայ: Ստացուած է, որ «խանութները ջարդուփշուր անողները, ոստիկանութեան վրայ կրակողները եւ ոստիկանութեան ու ներքին զօրքերի վրայ նուսակներ նետողները», հանրահաւաքի մասնակիցները չեն եղել: Բայց խնդիրը միայն սա չէ: Փաստօրէն, երկրի նախագահի պաշտօնը զբաղեցնող մարդը յայտարարում է, թէ Մարտի 1-ին ինչ-որ մարդիկ կրակել են ոստի-

կանների վրայ, նուսակներ են նետել եւ այլն: Յիշեցնենք, որ առայսօր «ոստիկանների վրայ կրակելու» կամ «նուսակներ նետելու» որեւէ փաստ չկայ, այդպիսի վկայութիւն չկայ, տեսագրութիւն չկայ, եւ հարիւրաւոր ձեռքակալուածները որեւէ մէկին նման մեղադրանք չի առաջադրուել: Ի՞նչ կրակոցների եւ նուսակների մասին է խօսում Սերժ Սարգսեանը, բա ինչո՞ւ առ այսօր այդ «կրակողներից» եւ «նուսակներ նետողներից» որեւէ մէկին չեն բռնել: Ի դէպ, եթէ Սերժ Սարգսեանին դուր է գալիս կիրոմետրերի մասին խօսելը, նկատենք, որ Մարտի 1-ի հետ կապուած՝ ոստիկանների «յայտնաբերած» միակ հրազէնը գտնուել է «դէպքի վայրից» 45 կիրոմետր հեռու՝ լճի յատակին, ժանգոտած վիճակում:

Բայց վերադառնանք Սերժ Սարգսեանի մտքերին: Արդէն արձանագրեցինք, որ «չեն եղել կրակոցներ հանրահաւաքի մասնակիցների վրայ, կրակոցները եղել են նրանցից մի կիրոմետր հեռու»: Բայց Սերժ Սարգսեանի յաջորդ միտքը պարզապէս սպանիչ է. «Յուցարարներն էին ուժ կիրառում հասարակական կարգը պահպանել փորձող ոստիկանութեան հանդէպ»: Ուրեմն, ցուցարարները, ինչպէս հասկացանք, հասարակական կարգը չէին խանգարում (խանութներ չէին թալանում եւ այլն): Հասարակական կարգը խանգարողները մի կիրոմետր հեռու էին: Ամօթ չլինի հարցնելը՝ բայց այդ դէպքում ի՞նչ գործ ունէին ոստիկանները ցուցարարների մօտ, որ սրանք էլ «ուժ կիրառեն»: Հասկանալի է, չէ՞, թէ ինչ է կատարուել: Երեւանի կենտրոնում տեղի է ունեցել հզօր հանրահաւաք, հանրահա-

ւաքի վայրից մի կիրոմետր հեռու ինչ-որ կասկածելի մարդիկ (ինչպէս աւելի ուշ պարզուեց՝ Սերժ Սարգսեանի համար «աշխատանքներ») խանգարել են հասարակական կարգը, բայց ոստիկաններն ու ներքին զօրքերը որոշել են դրա դէմն առնելու փոխարէն շրջապատել հանրահաւաքի մասնակիցներին: Եթէ ձեզ հասարակական կարգն էր հետաքրքրում, գնայիք «մի կիրոմետր հեռու», ի՞նչ գործ ունէիք հանրահաւաքի մօտ:

Հետաքրքիրն այն է, որ այս հարցի պատասխանը նոյնպէս Սերժ Սարգսեանն է տալիս՝ յայտարարելով. «Եթէ ոստիկանութեան կողմից ուժ կը կիրառուէր, դա կը հանգեցնէր շատ աւելի մեծ թիւով զոհերի, հետեւանքները եւս աւելի ծանր կը լինէին»: Այլ կերպ ասած, նրանք նախօրոք հաշուել են, թէ ո՞ր դէպքում զոհերի թիւն աւելի մեծ կը լինէր՝ եթէ ուժ կիրառեն անյապա՞ղ, թէ՞ աւելի ուշ: Պարզ ասած, Մարտի 1-ի դէպքերը կարելի է որակել որպէս կանխամտածուած յանցագործութիւն: Այսինքն՝ նրանք նախապէս որոշած են եղել անպայման մի քանի հոգու սպաննել, որպէսզի հետագայում ստիպուած չլինեն շատ աւելի մեծ թիւով մարդկանց սպաննել:

Ի դէպ, Սերժ Սարգսեանի այս յայտարարութիւնները չափազանց կարեւոր են եւս մի առումով: Առայսօր, զուտ ձեւականօրէն, նա որեւէ պատասխանատուութիւն չէր կրում Մարտի 1-ի դէպքերի համար: Բայց իր այս յայտարարութիւններով նա պաշտօնապէս իր վրայ վերցրեց այդ յանցագործութիւնների պատասխանատուութեան մի մասը: Ինչ արած, կ'ընդունենք ի գիտութիւն: ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ «ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

չենց Միացեալ Նահանգները, որն անմիջապէս արձագանքեց Մեթիւ Բրայզայի շուրթերով: Միգուցէ Սերժ Սարգսեանին բոլորովին էլ հետաքրքիր չէ, թէ ինչ կասի իրեն Գիւլը, կամ ինչ կասի էրդողանը, կամ եթէ հետաքրքիր է, ապա ոչ աւելի, քան այն, թէ ինչ կասի Միացեալ Նահանգները: Հնարաւոր է նաեւ, որ հենց այդ հանգամանքով էր պայմանաւորուած, որ հայ-թուրքական յարաբերութեան վերաբերեալ փաստացի այդ աննախադէպ յայտարարութիւնն արուեց Մոսկուայում, Վաշինգտոնին թերեւս չթողնելով ընտրութեան հնարաւորութիւն: Եւ ընդհանրապէս, պէտք չէ բացառել, որ Սերժ Սարգսեանի համար խնդիրն ամենեւին էլ հայ-թուրքական յարաբերութիւնը չէ, երբ նա խօսում է դրա մասին: Խնդիրը գուցէ շատ աւելի պարզ է: Հայաստանի նոր նախագահին, իշխանութեան ձեւաւորման եւ ամրապնդման համար, թերեւս բաւարար չէ միայն ներքին դաշտում ընդգծել իր եւ Ռոբերդ Քոչարեանի տարբերութիւնը, ու անհրաժեշտ է այդ մարտավարութիւնը դուրս բերել արդէն միջազգային ասպարեզ: Կամ ներքին շրջանակը այդ մարտավարութեան առումով բաւարար չէր, կամ էլ պարզապէս Սերժ Սարգսեանը մտածում է, որ ներքին դաշտում դա արդիւնաւէտ մարտավարութիւն չէ եւ ակնկալում է, որ գոնէ արտաքին աշխարհում այդ մարտավարութիւնն իր համար կ'ունենայ արդիւնք:

ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹ-ԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ՝
 ՍԱՐԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
 ՎԱԶԳԷՆ ԽՈՍՏԱՆԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Դեռ. (626) 797-7680
 Ֆաքս. (626) 797- 6863
 E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social
 Democratic Hunchakian Party of
 Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)

Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, Canada \$60 (Second
 Class), \$75.00 (Air Mail)
 Overseas \$85.00 (2nd Class Mail),
 \$125.00 (Air Mail).
 All payments must be made in
 US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԱՆՐԱՅԱԲԱՔԸ ԳԻՒՄՐԻՈՒՄ

Համաժողովրդական շարժման Յունիսի 28-ի հանրահավաքը Գիւմրիում մեկնարկելու էր Յունիսի 28-ին ժամը 17-ին, բայց ինչպէս նշեց հանրահավաքը վարող Սուրէն Սուրէնեանցը, կառավարութեան որոշմամբ, շաբաթը յայտարարուել է աշխատանքային օր, ու սա որոշակի խոչընդոտներ է յարուցում հանրահավաքի մասնակիցների համար, իսկ Լ.Տէր-Պետրոսեանը փոքր-ինչ ուշանում է, որովհետեւ ճանապարհին՝ բնակավայրերում, մարդիկ կանգնեցնում են նրա մեքենան եւ ողջունում առաջին նախագահին:



Տեսարան մը Յունիսի 28-ին Կիւմրիի մէջ տեղի ունեցած հանրահավաքէն

Մենք չենք եկել ձեզ ոգեւորելու, վճռականութեան կոչելու, չենք եկել ձեզ խրախուսելու, որովհետեւ դուք դրա կարիքը չունէք: Հակառակը՝ մենք եկել ենք, որ դուք մեզ ոգեւորէք, դուք մեզ խրախուսէք, որովհետեւ ընտրութիւններից յետոյ դուք ապացուցեցիք, որ Գիւմրին Հայաստանի քաղաքական տեսակետից ամենաակտիվ քաղաքն է, այսօր Գիւմրիում կայացած հանրահավաքի ընթացքում ասաց հանրապետութեան առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Չնայած յորդառատ անձրեւին՝ հազարաւոր գիւմրեցիներ մասնակցեցին քաղաքի Ազատութեան Հրապարակում տեղի ունեցած հանրահավաքին եւ մնացին մինչեւ վերջ:

Համաժողովրդական Շարժման առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը կրկին անդրադառնալով մարտիմէկեան դէպքերին, ասաց. «Ընտրութիւնների կեղծիքներին գուժարեցին նաեւ Մարտի 1-ի եղեռնագործութիւնը սեփական ժողովրդի դէմ: Պատասխանատուները յայտնի են, բայց ոստիկանութիւնը եւ բանակը ժողովրդի վրայ չեն

կրակել: Ռոբերդ Քոչարեանն է երազում իր ոճրագործութիւնը նրանց վրայ բարդել»:

Հանրապետութիւն կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանն իր ելույթում ասաց. «Մենք արդար ենք, ժողովուրդ, մեր պահանջներն արդար են: Մենք պահանջում էինք արդար ընտրութիւններ, ասում էինք՝ փողով մեքենայ գնէք, տուն գնէք, վերջի վերջոյ, փողով ծախու մտաւորական ու երգիչ գնէք, բայց ձեր ժողովրդի ձայնը մի գնէք»:

Հանրահավաքի ընթացքում իրենց խօսքը հանրութեանը հասցրին Գիւմրու ժողովրդական խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղեանը, ժողովրդական կուսակցութեան առաջնորդ Ստեփան Դեմիրճեանը, նաեւ ընթերցուեց քաղաքապետարկաներ Աշոտ Զաքարեանի, Գագիկ Զհանգիրեանի, Յակոբ Յակոբեանի, Սասուն Միքայէլեանի, Միասնիկ Մալխասեանի, Սմբատ Այվազ-

եանի, Սուշոյ Սաղաթէյեանի, Պետրոս Մակէեանի, Դաւիթ Մաթոսեանի, Գէորգ Ղազարեանի, Սուրէն Սիրունեանի, Յուսիկ Բաղդասարեանի, Յովհաննէս Յարութիւնեանի յղած ուղերձը: Մեր ժողովուրդը ապացուցեց, որ ինքը հանրապետութեան կեանքում այլեւս կարելու գործօն է, եւ որ սահմանադրութեամբ իրեն վերապահուած իշխանութեան տէրն է, եւ այն ոչ ոքի այլեւս չի գիչելու: Մենք՝ քաղաքապետարկաններս, ողջունելով հանրահավաքին ներկայ բոլոր մասնակիցներին, յայտնում ենք մեր պայքարի վճռականութեան մասին եւ վստահեցնում, որ համաժողովրդական շարժումը նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջնորդութեամբ հասնելու է իր նպատակին:

Իսկ վերջինս, անդրադառնալով իր նպատակներին, փաստեց. «Ես 10 տարի լուեց, գիտութեամբ զբաղուելուց յետոյ եկել եմ միայն այս աւագակապետութիւնը կանխելու համար, սա ազգային աղէտ է:

Կրկնում եմ, որ ես միջոց եմ, գործիք, այս իշխանութիւններից ազատուելու համար»: Նա նշեց, որ եկել է օրինակաւորութիւն հաստատուելու եւ ժողովրդի պաշտպանը դառնալու համար:

«Հաւատում եմ՝ կան մարդիկ, ովքեր նոր են ընդգրկուել կառավարութեան կազմում եւ գուցէ ունեն ազնիւ նպատակներ՝ Տիգրան Սարգսեան, Էդուարդ Նալբանդեան, եւս մի երկու նախարարներ, բայց չեմ հաւատում, որ այս մարդիկ կը կարողանան որեւէ գործնական քայլեր անել, որովհետեւ այս համակարգը նրանց կը խեղդեն»: Լեւոն Տէր-Պետրոսեանը կարծիք յայտնեց, որ կա՛մ նրանք կը դառնան աւագակապետի անդամներ, կա՛մ էլ նրանք դուրս են շարտուելու այդ համակարգից:

Ես իշխանութեան չեմ ձգտում: Ընտրութիւններից առաջ վճռել էի, որ նախագահ եմ մնալու 2-3 տարի, մաքրելու էի տիրող համակարգը, որից յետոյ իշխանութիւնը փոխանցելու էի աւելի երիտասարդ, եռանդուն քաղաքական գործիչների՝ Ստեփան Դեմիրճեանին, Արամ Սարգսեանին, Բաֆֆի Յովհաննիսեանին, Ալեքսանդր Արզումանեանին, Դաւիթ Շահնազարեանին:

Լեւոն Տէր-Պետրոսեանը պայքարի շարունակման կոչ արեց հանրահավաքին ներկայ քաղաքացիներին ու տեղեկացրեց, որ ապագայում նմանատիպ հանրահավաքներ կ'անցկացուեն հանրապետութեան մի քանի այլ տարբեր քաղաքներում՝ Թալինում, Հրազդանում, նաեւ՝ որոշ գիւղերում:

Գիւմրու հանրահավաքը եզրափակելիս, Ս.Սուրէնեանցը տեղեկացրեց, որ յաջորդ հանրահավաքը տեղի է ունենալու Յունիսի 4-ին Մատենադարանին յարող տարածքում:

«ԼՂՀ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՀԵՐՔԵԼ ՍԱՐՏԻ 1-Ի ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: «Եթէ խօսուում է Մարտի 1-ի դէպքերին դարաբաղեան ուժերի մասնակցութեան մասին, ապա այդ մեղադրանքները պէտք է հերքուեն հենց ԼՂՀ իշխանութիւնների կողմից, բայց մեր իշխանութիւնների կողմից այդ մեղադրանքները դեռեւս չեն հերքուել», - «Ա1+»-ին տուած հարցազրոյցում ասաց ԼՂՀ նախկին փոխարտգործնախարար, ԼՂՀ նախագահի նախկին թեկնածու Մասիս Մայիլեանը:



ԼՂՀ նախկին փոխարտգործնախարար, Մասիս Մայիլեան

Եւ քանի դեռ նա չի պատկերացնում իրականում դարաբաղեան ուժերը մասնակցել են ցուցարարների դէմ կազմակերպուած միջոցաւճար, թէ ոչ, չցանկացաւ մեկնաբանել երեւոյթը. միայն նկատեց, որ մտահոգուած են. «Մենք հայերս պէտք է հասնենք նրան, որ քաղաքական հարցերը քաղաքական ճանապարհով լուծուեն, արիւն թափելը պէտք է ընդհանրապէս դուրս մնայ մեր օրակարգից եւ խաղաղ ձեւով, երկխօսութեան ձեւով լուծուեն ինդիւրները. այդ կարգի իրադարձութիւնները ցնցող են բոլոր հայերի, այդ թւում նաեւ արցախցիների համար»:

բացասական եմ գնահատում միջամտութիւնը, թէ կոչերի, թէ ուժային ձեւով. դա իմ մօտեցումն է»:

Մասիս Մայիլեանին մտահոգում է այն հանգամանքը, որ ՀՀ նախագահի ընտրութիւններում շատ քիչ քաղաքական ուժեր են ազատագրուած տարածքները պահելու օգտին խօսել. «Զիջումային մոտիվներ կային գրեթէ բոլոր նախագահի թեկնածուների մօտ, որը ցաւալի է, դա նաեւ ստիճու է, որ Ֆասիէի եւ միւս համանախագահների մօտ տարածքները գիջելու վերաբերեալ խօսելու գայթակղութիւն առաջանայ կամ Ղարաբաղի անկախութիւնը փոխգիջման առարկայ դարձնեն»:

Մայիլեանը չի շեղեցրեց, որ տարբեր յանձնաժողովներ են աշխատում եւ դարաբաղեանների մասնակցութիւնը «Մարտի 1-ին» եւ այդ կարգի այլ հարցեր պէտք է պարզուեն. «Բայց ես ասում եմ, ընդհանրապէս պէտք է բացառուի ԼՂՀ-ի որեւէ միջամտութիւն ՀՀ ներքաղաքական հարցերում. ես

ՀՐԱՆՈՒՇ ՅԱԿՈՒԲԵԱՆԸ ԿՐ ԴԱՌՆԱՅ ՆԱԽԱՐԱՐ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Սերժ Սարգսեանը Յունիսի 27-ին հրամանագիր է ստորագրել Հրանուշ Յակոբեանին Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործերի Նախարարութեան Սփիւռքի հետ կապերի Պետական կոմիտէի Նախագահ նշանակելու մասին: Ի դէպ, Հոկտեմբերի 1-ից գործելու է Սփիւռքի նախարարութիւն:

Հանրապետութեան նախագահը նոյն օրը հրամանագիր է ստորագրել նաեւ Ռոբերդ Նազարեանին Հանրալին Մատալու թիւնները կարգաւորող Յանձնաժողովի Նախագահ նշանակելու մասին՝ հինգ տարի պաշտօնավարման ժամկէտով:

ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԸ ՅՈՐԴՈՐՈՒՄ ԵՆ ԱՐՄԱՆ ԲԱԲԱԶԱՆԵԱՆԻՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈ»: Երեւանեան 8 թերթերի խմբագիրներ, ինչպէս նաեւ Երեւանի Մամուլի Ակումբը եւ «Ժամանակ Երեւան» թերթի խմբագրակազմը դիմել են արդարադատութեան նախարար Գէորգ Դանիլէյեանին, յորդորելով նպատակ «Ժամանակ Երեւան» թերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանի վաղաժամկէտ ազատ արձակմանը:

րին՝ «անկախ» յանձնաժողովն առանց հիմնաւորման երկու անգամ նրան հնարաւորութիւնից զրկեց օգտուել օրէնքով վերապահուած վաղաժամկէտ ազատումից», - ասուած է լրագորդների նամակում:

Արման Բաբաջանեանը մօտ երկու տարի առաջ դատապարտուել է 3,5 տարուայ ազատազրկման՝ զինուորական ծառայութիւնից խուսափելու մեղադրանքով:

«Որպէս Հայաստանում հասարակական կարծիք ձեւաւորող լրատուամիջոցների ղեկավարներ եւ որպէս «Ժամանակ Երեւան» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանի գործընկերներ, ակնկալում ենք, որ Ձեր անմիջական հակողութեամբ հնարաւորութիւն կը ստեղծէք Արման Բաբաջանեանի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկէտ ազատելու, պատիժը չկրած մասն աւելի մեղմ պատժատեսակով փոխարինելու համար «Դատապարտեալների հիւանդանոց» քրէակատարողական հիմնարկի կողմից «անկախ» յանձնաժողովին միջնորդութեան համար», - նշել են դիմումի հեղինակները:

«Ընթացիկ ամսին լրանում է «Ժամանակ Երեւան» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկէտ ազատուելու, պատիժը չկրած մասն աւելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հերթական հնարաւորութիւնն ուսումնասիրելու ժամկէտը: Գրեթէ մէկուկէս տարի է, ինչ Արման Բաբաջանեանը ենթակայ է պայմանական վաղաժամկէտ ազատման, սակայն չնայած քրէակատարողական հիմնարկների գոյգ միջնորդութիւնները:

Նրանք նաեւ համոզմունք են յայտնել, որ Արման Բաբաջանեանի ազատ արձակումը «էականօրէն կը լիցքաթափի երկրում պրկուած քաղաքական լարուածութիւնը»:

ԼՈՒՐԵՐ

ՄԵԹԻ ԲՐԱՅՉԱ. «ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ԳՏՆԵԼ ԴԱՐԱԲԱՂԻ ԱՊԱԳԱՅ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ՝ ԵՐԿՈՒՍՏԵՔ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՁԵԲԱԿԵՐՊՈՒՄ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Եւրոպայում Անվտանգութեան եւ Համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթիւ Բրայզան «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, որ Լեռնային Ղարաբաղի ապագայ կարգավիճակի հարցում իրենք ջանում են գտնել «երկուստեք ընդունելի ձեւակերպում»:

«Տարածքային ամբողջականութիւնը, իհարկէ, միջազգային իրաւունքի հիմնարար սկզբունքներից է, եւ Միացեալ Նահանգները ճանաչում է Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, սակայն մենք նաեւ ասում ենք, որ եթէ Լեռնային Ղարաբաղի հարցում պետք է ձեռք բերուի քաղաքական համաձայնութիւն, պետք է հաշուի առնուեն նաեւ միւս սկզբունքները», - արտգործնախարար էդուարդ Նալբանդեանի հետ հանդիպումից յետոյ ասաց Բրայզան՝ յաւելելով. - «Մենք ցանկանում ենք Ղարաբաղի ապագայ կարգավիճակի այնպիսի ձեւակերպում գտնել, որը ընդունելի

լինի կողմերի համար»: Մինսկի խմբի համանախագահները ուրբաթ ուշ երեկոյան Երեւան էին ժամանել Բաքուից՝ ատրպէյճանական «Ազալ» ավիաընկերութեան ինքնաթիռով, եւ նոյն օրը հանդիպել էին Հայաստանի արտգործնախարար էդուարդ Նալբանդեանի հետ:

Մինսկի խմբի համանախագահները Յունիս 28-ին հանդիպում են ունեցել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հետ:

Հանդիպմանը քննարկուել են դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման մաղտրիտեան առաջարկութիւնների հետ կապուած հարցեր: Սերժ Սարգսեանը, ըստ նախագահի մամուլի գրասենեակի, ներկայացրել է բանակցային գործընթացի վերաբերեալ հայկական կողմի տեսակէտներն ու նկատաւումները:

Համանախագահները Հայաստանի նախագահին տեղեկացրել են Բաքուում Ատրպէյճանի ղեկավարութեան հետ ունեցած հանդիպումների մասին:

ՏՊԱԳՐՈՒԵԼ Է ԶՐԱՆԴ ԴԻՆՔԻ ԳԻՐՔԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕՅ»: Տպագրուել է Հրանդ Դինքի «Երկու դրկից ժողովուրդներ, հեռու հարեւաններ» գիրքը, որ նա ժամանակին գրել էր Թուրքիայի տնտեսական եւ սոցիալական հետազոտութիւնների հիմնադրամի համար: Գիրքը հրատարակուել է «Ակօս» թերթի սպաննուած խմբագրապետի անուան միջազգային հիմնադրամի ջանքերով:

«Այս գիրքը հրաւէր է... Ձեր մտխեան, սիրոյ ու գիտակցութեան հրաւէր՝ ուղղուած համայն մարդկութեանը», - գրքի առաջաբանում գրել է «Ակօս»-ի նոր խմբագրապետ էթիէն Մահչուպեանը:

Իր գիրքը նուիրելով բոլոր հայերին, որոնք հազարաւոր տարիներ ապրելով եւ բարգաւաճելով այդ հողում՝ ողբերգական տարի-

ներին տարհանուել են իրենց բնօրրանից, ինչպէս նաեւ կեանքից զրկուած Անատոլիայի բոլոր անմեղ բնակիչներին՝ անկախ այն հանգամանքից՝ հայ են, թուրք, թէ քուրդ, Դինքը իր առաջին եւ վերջին գրքում գրել է. - «Մեր նախնիները այս կամ այն կերպ լրացրել են իրենց սեփական էջերը, իրական խնդիրն այն է, թէ ինչպէս ենք մենք այսօր լրացնելու երկկողմ յարաբերութիւններում առկայ սպիտակ էջերը: Արդեօք մենք պատրաստուում ենք վարուել այնպէս, ինչպէս վարուեցին այդ ասուելի աղէտի պատասխանատուները, թէ՞ ուղում ենք դասեր քաղել եւ լրացնել այդ էջերը քաղաքակիրթ մարդկանց նման: Սա է մեր առջեւ դրուած ամենամեծ պատասխանատուութիւնը»:

ՉՊԵՏՔ Է ՈՐԵԻ ԱԿՆԿԱԼԻՔ ՈՒՆԵՆԱԼ

Շարունակուած էջ 1-էն

Իշխանութիւններն աճարար էին եւ կարողացան խաբել Եւրոխորհրդարանի ներկայացուցիչներ Պրեսկոտին եւ Կոլումբիէին, կամ էլ Պրեսկոտը մե Կոլումբիէին գործարքի մէջ են մեր իշխանութիւնների հետ», - յայտարարեց Լ. Սարգսեան:

Ըստ բանախօսի, ԵՄԽՎ-ի ընդունած նոր՝ 1620 բանաձեւը ոչինչով լաւ չէ նախորդ՝ 1609 բանաձեւէն եւ Հայաստանի իշխանութիւններուն հնարաւորութիւն կը տրուի իրենց գործողութիւններուն մէջ աւելի ազատ ըլլալու եւ Եւրոպայի Խորհուրդի կողմէ առաջադրուած պայմաններու իրականացումը յետաձգելու միջնէն Յունուար:

Լ. Սարգսեանի գնահատականով Եւրոխորհուրդը իր այդ քայլով ցոյց տուաւ, որ Հայաստանի նման երկրի մէջ ան ոչ մէկ ազդեցութիւն

չունի եւ հայ ժողովուրդը այսուհետեւ չպետք է որեւէ ակնկալիք ունենայ, որ Եւրոպան կրնայ ինչ-որ հարց լուծել Հայաստանի մէջ:

«Մեր երկրում, մեր տանն ինքներս պետք է կարգաւորենք մեր խնդիրներն ու հարցերը: Որ պահից դա հասկանանք՝ այդ պահից մենք յաղթած ենք», - շեշտեց Լ. Սարգսեանը: Խօսելով ստեղծուող Համագային Գոնկրէսի մասին՝ բանախօսը յայտնեց, որ բոլորը պետք է մասնակցին Գոնկրէսի ձեւաւորման եւ ակտիւ դերակատարութիւն ունենան աշխատանքներուն մէջ:

Ընկերուհի Սարգսեան այս առթիւ յայտարարեց, որ չի հաւատար Մարտի 1-ի դէպքերու ուսումնասիրման Ազգային ժողովի ժամանակաւոր յանձնաժողովին: «Յանձնաժողովի անդամների նպատակն է կոծկել կատարուած դէպքերը», - ըսաւ ՄԴԿԿ ատենապետը:

ԼԵՒՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ԶՐԱՊԱՐԱԿԵՑ

Շարունակուած էջ 1-էն

ցած անձանց, ինչպէս նաեւ Տէր-Պետրոսեանի՝ Վայոց Ձորի մարզի նախընտրական շտաբի պետերի հարեւաններին: Բնակութեան վայ-

րերից վերցնել հանրահաւաքներին մասնակցած անձանց, ինչպէս նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ Վայոց Ձորի նախընտրական շտաբի պետերի, նրանց ընտանիքի անդամների վերաբերեալ տեղեկանքներ եւ բնու-

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՎՏԱՆԳԱԻՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 1-էն

եանը, առաջինը լինելով, պաշտօնապէս համաձայնութիւն է տալիս Յեղասպանութեան փաստը հարցականի տակ դնող Թուրքիայի այդ առաջարկին: Դրանով իսկ Հայաստանի նախագահի պաշտօնը բռնազաւթած անձը կա՞մ հաւաստում է, որ ողջ հայութեանը յուզող այս հարցը իր համար պարզապէս փոխարկելի մանրադրամ է, կա՞մ մատնում է նախագահի պաշտօնին անհամատեղելի իր քաղաքական ու դիւանագիտական ողջ տգիտութիւնը»:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Հայաստանի վարչութիւնը Սերժ Սարգսեանի դիրքորոշումը նկատեց ազգակործան ու այս առթիւ յայտարարեց. «Խոր վրդովմունքով տեղեկացանք Մոսկուայում Սերժ Սարգսեանի այն յայտարարութեան մասին, թէ իբր անհրաժեշտ է ստեղծել հայ-թուրքական «պատմական փաստերի ուսումնասիրման» յանձնաժողով: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Սերժ Սարգսեանը կամ կասկածի տակ է առնում Հայոց Մեծագոյն ողբերգութեան՝ Յեղասպանութեան եղելութիւնը, կամ էլ անձամբ տեղեկ չէ այդ փաստերի մասին: Ի տարբերութիւն նրա, հայ ժողովուրդը Յեղասպանութեան խնդրի մասին փաստեր հաւաքելու կարիք չունի, որովհետեւ դժուար է գտնել մի հայ գերդաստան, ով անուղղակիորէն տուժած չլինի այդ արհաւիրքից:

«Յեղասպանութիւնը եղել է, եւ այն, նախագահի կողմից քննարկման դնելն արդէն տեղափոխում է բարոյական հարթութիւն: Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը դատապարտում է նմանօրինակ անպատասխանատու յայտարարութիւնները եւ կոչ է անում Սերժ Սարգսեանին նմանատիպ արտայայտութիւններ անելուց առաջ գոնէ մի քիչ մտածել դրա վերաբերող եւ ազգակործան հետեւանքների մասին»:

Դատապարտումի յայտարարութեամբ մը հանդէս եկան նաեւ Եւրոպահայ շարք մը կազմակերպութիւններ:

«Սփիւռքահայութեան տասնամեակներ շարունակ կատարած աշխատանքը, տասնեակ երկրների, մասնաւորապէս Եւրոպայում մենք ստի կողմից Յեղասպանութեան փաստի ճանաչումը, Հրանդ Դինքի եղեւական սպանութիւնը եւ հազարաւոր այլ փաստերը անտեսելով «անցնում է Թուրքիայի կողմից ներկայացուած թէգիւն» ուսումնասիրել թէ արդեօք Յեղասպանութիւն տեղի ունեցել է, թէ ոչ: Այդ քաղաքականութիւնը դէմ է համայն հայութեան շահերին եւ դաւաճանում է 1,5 միլ. Ձոհուածներին ու վերապրած սերնդին:

«Մենք խստագոյնս դատապարտում ենք նման թեթեւամիտ քաղաքականութիւնը եւ ՀՀ նախագահից պահանջում ենք հրաժարուել այդ ազգամոլանա, ազգա-

դաւան եւ ազգին պառակտող քայլից»:

Եւրոպահայ միութիւններու յայտարարութեան տակ ստորագրած են Հայ Ազգային Մշակութային Կենտրոն (Գերմանիա), Հայ Ժողովրդավարների Նախաձեռնութիւնը (Գերմանիա) եւ Հայ Ժողովրդավարների Կոմիտէն (Շուէդիա):

Իշխանամէտ կուսակցութիւններէն առաջինը իր անհամաձայնութիւնը յայտնեց Արամ Գասպարի Սարգսեանի գլխաւորած Հայաստանի Դեմոկրատական Կուսակցութիւնը, յայտարարելով թէ, դէմ պիտի կենայ պատմաբաներէ բաղկացած հայ-թրքական յանձնաժողովի կազմութեան:

ՅՅԴ Հայ Դատի Կեդրոնական Գրասենեակի տնօրէն Կարօ Մինոյեան ըսած է թէ, «ակնյայտօրէն վատ խորհուրդ են տուել հայ-թուրքական յանձնաժողովի հետ կապուած հարցով»:

«Մենք այժմ գործընթաց ենք սկսել՝ ուղղակիօրէն նախագահից պահանջելով բացատրութիւններ ու ճշգրտումներ իր արտայայտութիւնների առնչութեամբ, որովհետեւ սա յստակ շեղում է թէ՛ նախկին նախագահ Քոչարեանի, թէ՛ գործող վարչակազմի մինչ այժմ որդեգրած դիրքորոշումներից: Վերջերս արտայայտած դիրքորոշումն անընդունելի է մեզ համար», - «Արմինյան Ռիփորթեր» շաբաթաթերթին յայտարարած է դաշնակցական գործիչը:

Հակառակ ծայր առած բողոքի ալիքին, Հայաստանի իշխանութիւնները ոչ մէկ փորձ կատարեցին ճշգրտումներ մտցնելու՝ Սերժ Սարգսեանի ըսածներուն մէջ:

Հայաստանի նախագահի խօսնակ Սամուէլ Ֆարմանեան վերահաստատելով Սերժ Սարգսեանի յայտարարութիւնը, ըսած է, - «Թուրքիայի կողմից հնչեցուել է առաջարկ Յեղասպանութեանը վերաբերող պատմական փաստերն ուսումնասիրելու նպատակով փորձագէտներից կազմուած յանձնաժողովի ձեւաւորելու վերաբերեալ: Մենք դէմ չենք որեւէ ուսումնասիրութեան, անգամ՝ ակնյայտ փաստերի եւ լայնօրէն ընդունուած իրողութիւնների: Ուսումնասիրութիւնը չի նշանակում փաստերի իսկութիւնը կասկածի տակ առնել», - «Ազգ» թերթին ըսած է Ֆարմանեան:

«Սակայն նման յանձնաժողովի ստեղծումը տրամաբանական կը լինէր մեր երկրների միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատումից եւ սահմանները բացելուց յետոյ միայն: Այլպէս այն կարող է դառնալ առկայ խնդիրները տարիներով երկարաձգելու եւ շահարկելու միջոց: 21-րդ դարում հարեւան պետութիւնների միջեւ չպետք է լինեն փակ սահմաններ, իսկ տարածաշրջանային համագործակցութիւնը կարող է լինել կայունութեան հաստատման լաւագոյն միջոցը», - յայտնած է Սերժ Սարգսեանի խօսնակը:

թագէր»:

Հայաստանի առաջին նախագահը բացառեց իր նախագահութեան տարիներուն նման հրահանգներու հնարաւորութիւնը. - «Խնդրեմ՝ գտէք մեր իշխանութեան օրօք մի այսպիսի փաստաթուղթ»:

Թեան պետ Անդրանիկ Միրզոյեան, հաստատեց, որ յարուցուած քրէական գործի շրջանակներէն ներս շարք մը յանձնարարականներ ուղարկած է եւ ամենայն հաւանականութեամբ, պիտի ուղարկէ հանրապետութեան մարզերու դատախազներուն:

ԱԶԳԱՅԻՆ

ԻՍ ԶԱՅՐԸ ՔԱՂԲԱՆՏԱՐԿԵԱԼ Է


ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ
(ՔԱՂԲԱՆՏԱՐԿԵԱԼ ԳՈՒՐԳԷՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆԻ ՈՐԴԻ,
ՄԻՀԿ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ)

Առեղի քան 116 օր է, ինչ իմ հայրը՝ գնդապետ Գուրգեն Եղիազարեանը, քաղբանտարկեալ է:

Առեղի ճիշդ, եթէ մտածենք, նա հասցրել էր քաղբանտարկեալ լինել մինչեւ Մարտի 3-ը: Չէ որ նրան ձերբակալեցին նաեւ Փետրուարի 26-ին եւ ապօրինի անազատութեան մէջ պահեցին ուղիղ մէկ օր: Ընդ որում, երկու անգամ էլ եկան գիշերով՝ աւտոմատներով, դիմակաւորուած: Հայրս կարող էր երկու անգամ էլ խուսափել քոչարեանասերժական բորենիների ձեռքը ընկնելու ոչ այնքան նախանձելի ճակատագրից, բայց հրաժարուեց, որովհետեւ իր անցած ուղին եւ կենսագրութիւնը թոյլ չէին տալիս թէկուզ մէկ րոպէ ապրել վախենալով, ապրել այն սպասելիքով, որ ամէն վայրկեան կը գան բորենիները եւ կը ձերբակալեն, իսկ առեղի ճիշդ՝ պատանդ կը վերցնեն իրեն:

Ճակատագրի հեզմանքն էր, թէ նախախնամութիւնը, որ սրանից 5 տարի առաջ նա գրեց «Բորենիները» գիրքը՝ թերեւս կանխագալով, որ մի օր հենց այդ բորենիներն իրեն պատանդ են վերցնելու՝ սեփական քաղաքական համոզմունքներից հրաժարուելու պահանջով: Հօրս վրայ «կարեցին» այն նոյն մեղադրանքները, որոնք կարուել են Համաժողովրդական շարժման պատանդ վերցուած միւս լիդերների վրայ: Նոյն շարաքստիկ 300-ը եւ 225-ը: Ես չեմ մանրամասնում այս յօդուածների նշանակութիւնը, որովհետեւ մեր վաշխանութիւնների թեթեւ ձեռքով մի ամբողջ ազգ՝ 10 տարեկան երեխայից մինչեւ 80 տարեկան ծերունի, դարձել է իրաւաբան:

Ընդամէնը մի քանի ամսում ի յայտ եկաւ մեր Քրէական օրէնագրքի շինծու յօդուածների մի ամբողջ շարան՝ 300, 225, 226, 316: Հօրս մեղադրում են, որ իւրացրել է պետական իշխանութիւնը: Միզուցէ ծեծուած խօսքեր են, բայց պէտք է անպայման գրել. սրանց համար պետական իշխանութիւն իւրացնող է համարուում նա, ով ունի քաղաքացիական կեցուածք, ով համաձայն չի այն անբարոյականութիւնների հետ, որոնք կատարում են իշխանութիւնները, ով համարձակուել է պաշտպանել իր եւ ժողովրդի մի զգալի հատուածի քուէն, որոնք այսքան հանգիստ իրենց վերագրեցին քոչարեանասերժական բորենիները:



Բաղդասարեան
Գուրգէն Եղիազարեան

Հիմա ես հարց եմ տալիս այս իշխանութիւններին, նրանց խամաճիկներին, Եւրոպայից օրը մէջ եկող ու գնացող պաշտօնեաներին, ոստիկանի հագուստի տակ թաքնուած յանցագործներին, յանցագործների տեղը ձերբակալուած քաղբանտարկեալներին. Գուրգէն Եղիազարեանը, Արարատ Զուրաբեանը, Սասուն Միքայէլեանը, Սմբատ Այվազեանը կամ Գաբրիէլ Զհանգիրեանն են իւրացրել իշխանութիւնը, թէ՛ Քոչարեանն ու Սարգսեանը, որ արդէն 3-րդ ընտրութիւնն է՝ գողանում են մեր ժողովրդի քուէն եւ իսկապէս իւրացնում պետական իշխանութիւնը: Կայ Հայաստանում մի խելամիտ անձնաւորութիւն, Գալուստ Սահակեանին, իհարկէ, չհաշուած, որ մտածի, թէ Քոչարեանն ու Սարգսեանը երբեւիցէ ստացել են ընտրողների գոնէ 30 տոկոսը:

Հիմա էս եւրոպացիները յայտարարել են, որ 300-ով կամ 225-ով ձերբակալուածները պէտք է ազատ արձակուեն, եւ միեւնոյն ժամանակ ընդունել, որ սրանց ժամանակ է անհրաժեշտ: Համ նալին, համ մեխին խփող եւրոպացի պրեսկոտների այս առաջարկը վերջին մասով ուղղակի ծիծաղելի է: Իմ խորին համոզմամբ, Հայաստանը որպէս խոպան դիտարկող եւ սեփական ստամոքսի կարեւորութիւնը առաջնային համարող եւրոպացիների այս առաջարկը ցոյց է տալիս վերջիններիս ծախուածութեան մակարդակը:

Ե՞ղի իրաւաբանական ֆակուլտետ կաշառքով ընդունուած եւ տարին մէկ անգամ դասի գնացող ուսանողի համար անգամ, հօրս եւ մնացածների համար գրուած գործերը կարգալուց չետոյ պարզ է, որ գործը միայն քաղաքական է, եւ նրանց ազատ արձակելու համար նախագահականից ընդամէնը մէկ գանգ է անհրաժեշտ: Համոզուած եմ, որ սրանք ամէն ինչ անելու են՝ Գուրգէն Եղիազարեանի պատանդութիւնը երկարացնելու համար: Այստեղ արդէն գործում է անձնական վրէժխնդրութեան ֆակտորը, որովհետեւ իմ հայրն առաջ է քաշել այնպիսի խնդիրներ, որոնք ուղղակիօրէն վերաբերում են Սաշիկ Սարգսեանի աղմկայարոյց յայտարարութիւններին՝ կապուած Հոկտեմբերի 27-ի հետ: Այս յայտարարութեան հեղինակներից մէկը՝ հայրս, ձերբակալուած է, միւսը՝ Գառնիկ Մարգարեանը, ընդհատակում է, իսկ իմ կուսակցութեան ատենապետ Լ. Սարգսեանը միայն նրա համար է ազատութեան մէջ, որ աշխարհասփիւռ կուսակցութիւն ունի թիկունքում կանգնած:

Բայց, միեւնոյն է, ոչինչ չի մոռացուում, եւ ոչ ոք չի մոռացուում: Արդարութիւնը յաղթելու է, եւ իմ հայրը յայտնուելու է ազատութեան մէջ, իսկ նրանք, ովքեր տուել են նրան եւ մեր միւս ընկերներին ձերբակալելու հրամանը, յայտնուելու են նրանց տեղում, եւ այդ ժամանակ ոչ մի անհասկանալի ծագման պրեսկոտներ եւ կոլոմբիներ չեն կարող փրկել իրենց անազատութեան մէջ յայտնուած ընկերներին, որոնց հետ վերջին շրջանում շատ սերտ գործնական յարաբերութիւններ են հաստատուել:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓԱՍՏԸ
ՉԱՍՏԱՏՈՒԱԾ Է

Դատապարտում ենք ՀՀ նախագահ Ս. Սարգսեանի Մոսկուա կատարած այցի ժամանակ հնչեցրած յայտարարութիւնը, որով նա համաձայնութիւն է տալիս, պատմական փաստերի ուսումնասիրման հարցով պատմաբանների յանձնաժողով ստեղծելու թուրքական կողմի առաջարկին:

Տասնամեակներ շարունակ համայն հայութիւնը, մասնաւորապէս սփիւռքահայութիւնը իր ողջ ներուժն ու ջանքերը նուիրել է Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման ու դատապարտման խնդրին: Տասնեակ երկրների խորհրդարաններ, կառավարութիւններ, հասարակական եւ քաղաքական տարբեր հաստատութիւններ եւ միջազգային կազմակերպութիւններ, ինչպէս նաեւ համաշխարհային համբաւ վայելող հայ եւ այլ ազգի բազմաթիւ գիտնականներ, պատմաբաններ գրողներ եւ քաղաքական գործիչներ վաղուց արդէն ճանաչել են այդ փաստը: Որոշ երկրներում օրէնքով պատասխանատուութիւն է սահմանուած Հայոց ցեղասպանութիւնը ուրացողների եւ ժխտողների համար:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը համաձայնութեամբ, պատմական փաստաթղթերը ուսումնասիրող հայ-թուրքական յանձնաժողովի ստեղծման հետ, պաշտօնապէս հարցականի տակ է դնում կատարուած ցեղասպանութեան փաստը:

Դատապարտում ենք նմանօրինակ անպատասխանատու յայտարարութիւնները եւ կոչ ենք անում ՀՀ նախագահ Ս. Սարգսեանին նմանատիպ արտայայտութիւններ անելուց առաջ մտածի դրա ազգակործան հետեւանքների մասին:

Հայ-թուրքական միջպետական յարաբերութիւնների կարգաւորման խնդիրը եւ սահմանների բացումը այլ հարց է եւ կարծում ենք ոչ ոք, ոչ մի հայ դրան դէմ չի: Դրան դէմ է հենց թուրքական կառավարութիւնը, սահմանի բացումն ու միջպետական յարաբերութիւնները պայմանաւորելով ԼՂ-ից հրաժարուելու եւ ցեղասպանութեան փաստի ուրանալու հետ:

Հայոց ցեղասպանութեան անհրաժեշտ փաստը քննարկման առարկայ դարձնելը, նշանակում է ոչ միայն տասնեակ երկրների կողմից այդ փաստի ճանաչման հերքումը, այլ նաեւ նշանակում է հայութեան արդարացի պահանջատիրութեան վերջակէտ, ինչին թուրքիան անընդհատ փորձում է հասնել. այդ պատճառով էլ երկու տարի առաջ կատարել է վերոյիշեալ առաջարկը, որը իրականում խորամանկ թակարդ է մեզ համար:

Յոյս կար, որ ՀՀ նախագահը կը փորձէր իր յայտարարութիւնը ճշդելու կամ հետ վերցնելու, սակայն ցաւօք, քաղաքական մի քանի կուսակցութիւնների ու կազմակերպութիւնների բողոք-յայտարարութիւններով հանդերձ, նախագահական պալատից պաշտօնապէս յայտարարեցին. «...Թուրքիայի կողմից հնչեցուել է առաջարկ Ցեղասպանութեանը վերաբերող պատմական փաստերն ուսումնասիրելու նպատակով փորձագէտներից կազմուած յանձնաժողով ձեւաւորելու վերաբերեալ: Մենք դէմ չենք որեւէ ուսումնասիրութեան, անգամ ակնյայտ փաստերի եւ լայնօրէն ընդունուած իրողութիւնների»:

ՀՀ նախագահը 6 միլիոն Սփիւռքահայութեան տասնամեակներ շարունակ կատարած աշխատանքը, տասնեակ երկրների, մասնաւորապէս Եւրոպայի ամենախիղճ երկրների, մասնաւորապէս Անգլիայի փաստերը անտեսելով, անցնում է թուրքիայի կողմից ներկայացուած թէգին՝ ուսումնասիրել թէ արդե՞ք ցեղասպանութիւն տեղի ունեցել է, թէ ոչ: Այդ քաղաքականութիւնը դէմ է համայն հայութեան շահերին եւ դաւաճանում է 1,5 միլ. Զոհուածներին ու վերապարած սերնդին:

Մենք խստագոյնս դատապարտում ենք նման թեթեւամիտ քաղաքականութիւնը եւ ՀՀ նախագահից պահանջում ենք հրաժարուել այդ ազգավնաս, ազգադաւան եւ ազգին պառակտող քայլից:

26. Յունիսի 2008 թ.

Հայ Ազգային Մշակութային Կենտրոն (Գերմանիա)
Հայ Ժողովրդավարների Նախաձեռնութիւն (Գերմանիա)
Հայ Ժողովրդավարների Կոմիտէ (Շուէդիա)

ՄԻՆՉԵՒ ԵՐՐ

Մարուակուած է 1-էն

այացուցելու, որ ինչ ձեւով ցեղասպանութեան հարցի արծարծումը, Հայաստանի հանրապետութեան օրուայ կարեւորագոյն խնդրի՝ պետականութեան կայացմանը պիտի նպաստէր կամ ինչ ձեւով Հայաստանը, որպէս անկախ պետութիւն, պիտի խթանէր Ցեղասպանութեան միջազգային անաւանագործը:

Գալով Ռոբերտ Քոչարեանին, ապա ան հագիւ նախագահ ընտրուած, որոշեց Ցեղասպանութեան հարցը դարձնել Հայաստանի արտաքին քաղաքականութեան հիմնահարցերէն մէկը, առանց սակայն պատշաճ կերպով ուսումնասիրելու հարցի համատեղ խնդիրները կամ անհամատեղ խնդիրները՝ Հայաստանի տարածաշրջանային առումով հետապնդած շահերուն եւ ոչ այլ բնորոշելով թէ արտաքին նախարարութիւնը ի՞նչ ձեւաչափի մէջ հարցը պիտի հետապնդէ: Յստակ է, որ այդ քայլը կ'առնուէր

աւելի շատ սփիւռքից հանդիսանալու միտումով, քան թէ այդ ուղղութեամբ լուրջ աշխատանք մտայնելու տրամադրութեամբ:

Այս ամէնը մեզ կը մղեն ընելու հետեւեալ հարցադրումները: Մինչեւ ե՞րբ Հայաստան եւ սփիւռք պիտի շարունակեն գործել անմերձակ ու կամայական: Արդե՞ք մտնուած մտեցումը չ'ի վնասէր մեր ընդհանրական շահերուն: Պատասխանը միանշանակ է: Այո՛ կը վնասէ եւ խուսափելու համար մտնուած իրավիճակէ, ժամանակ եւ այլեւս եւ նոյնիսկ անցած, որ վերջապէս մշակուի գիտականօրէն ուսումնասիրուած, բազմակողմանիօրէն վերլուծուած, ռազմավարութեան ծրագիր մը, որ յստակօրէն բանաձեւուած ըլլան մեր պահանջները եւ գանձակիրազործելու նախապարհները, ու բնորոշումը ըլլան Հայաստանի եւ սփիւռքի մասնակցութեան շարունակականութեան քաղաքականութեան զարգացումը: Համոզուած ենք, որ այս է ապագայի յաջողութեանց միակ գրաւակները:

ՎԱՐՑԱԶՐՈՅՑ

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ՍԵՂՐԱԿ ԱԾԵՍԵԱՆ

«ՍԴՅԿ-Ն ԺՈՂՈՎՐԴԻ ԴԵՏ Է ՈՒ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԱՄԱՐ»

ՀԵՂԻՆԷՄԱՆՈՒԿԵԱՆ «ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆ»

Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցության Կենտրոնական Վարչության ատենապետ Սեղրակ Աճեմեանը Յունիսի 13-21-ը Հայաստանում էր: Մեր բացառիկ հարցազրույցը նրա հետ է:

- Պարոն Աճեմեան, վերջին ամսերում Դուք Հայաստան էիք եկել վերջին ամսերում Դուք Հայաստանում ընտրություններից առաջ: Ինչպե՞ս էք գնահատում Հայաստանի յետընտրական իրավիճակը եւ ի՞նչ կերպ արձագանքեց սփիւռքահայությունը Մարտի 1-ի իրադարձություններին:

- Մարտիմէկեան արիւնայի իրադարձութիւնները, որոնցով անցաւ Մայր Հայրենիքը, լուրջ վրդովեցրեց ու մտահոգեց հայրենիքից դուրս ապրող ողջ հայութեանը: Մտահոգութիւններն առաւելագոյն առնչուում են նրան, թէ ի՞նչ կերպ է կարողանալու յաղթահարել այս ճգնաժամը ժողովուրդն՝ իր հերթին, իշխանութիւններն՝ իրենց հերթին: Այդ իրադարձութիւնների գլխաւոր ու միակ պատճառը խորհրդարանական եւ նախագահական կեղծուած ընտրութիւններն էին: Հենց այդ կեղծուած ընտրութիւնները վիճարկելու իր իրաւունքն էր փորձում իւրացնել այս հասարակութիւնը, ընդ որում՝ առաջին անգամ այդքան միասնակամ ու հաստատակամ: Իսկ ինչ արեց իշխանութիւնը: Բռնացաւ ժողովրդի արդար պահանջին, որն էլ ծնեց Մարտի 1-ը: Մենք՝ Ս.Դ.հնչակեան կուսակցութիւնը, ժողովրդավարութեան ջատագովն ենք, եւ այն երեւոյթները, որոնք կատարուեցին ընտրութիւններից առաջ եւ յետոյ՝ չպետք է պատահին իրեն ժողովրդավար երկիր հռչակած մեր պետութեան հետ: Յայտնի իրադարձութիւններից արդեն հինգ ամիս է անցել, սակայն դրական ոչ մի երեւոյթ, մարտիմէկեան իրադարձութիւնները բացայայտելու ուղղութեամբ որեւէ գործուն քայլ երկրում չի արձանագրուել: Դա մենք պայմանաւորում ենք իշխանութիւնների ապաշնորհ կեցուածքով: Վերջիններս չեն կարողանում պատշաճ դիրքերից ու պատշաճ ձեւով յարաբերուել միմեանց եւ հասարակութեան հետ: Յամենայնդէպս, լաւատես ենք, որ իրավիճակը կը շտկուի, որքան էլ որ այն դուրս է եկել բնականոն հունից: - Ընդդիմութիւնն առկայ ճգնա-



ՄԴՀԿ-ի Կենտրոնական Վարչութեան ատենապետ Սեղրակ Աճեմեան

ժամից դուրս գալու ելքերից մէկը համարում է արտաիւրս գալու հակառակ եւ խորհրդարանական ընտրությունները: Դուք ե՞ւս համակարծիք էք այդ մտտեցմանը:

- Բնականաբար, պէտք են ոչ միայն արտահերթ, այլ նախեւառաջ ազատ, արդար եւ ժողովրդավար ընտրութիւններ: Ով էլ որ այդպիսի ընտրութիւնների արդիւնքում նախագահ ընտրուի, մենք պատրաստ կը լինենք համագործակցել նրա հետ: Բայց, ըստ իս, մինչ ընտրութիւնները, առկայ ճգնաժամի յաղթահարման քայլերից առաջինը քաղաքական բանտարկեալներին ազատ արձակելն է, որովհետեւ եւրոպական ընտանիքի անդամ եւ ոչ մի երկրում ու առհասարակ առաջադէմ աշխարհում ընդունուած չէ, ամօթ է քաղաքական հայեացքների համար բանտարկուած քաղաքացիներ ունենալը: Շատ մտահոգիչ են նաեւ օրէնքի ուժ ստացած այն արգելքները, որոնք նպատակ ունեն սահմանափակել մարդկանց խաղաղ հանրահաւաքներ անելու իրաւունքը: Կրկնում եմ. իրեն ժողովրդավար հռչակած երկրի համար հանրահաւաք արգելելը, մեղմ ասած՝ անթոյլատրելի է: Մտահոգիչ է նաեւ ՋԼՄ-ների կաշկանդուած, եթէ չասենք ընդգծուած պրոիշխանական վարքագիծը: Շատ ուրախացա՛յ, երբ իմացա՛յ, որ, Ա՛+Ե հեռուստաընկերութիւնը Եւրոպական դատարանում շահեց դատը, ինչը նշանակում է, որ մամուլը մէկ քայլով ազատ դարձաւ: Յուսով եմ՝ այդ հ/ը-ն շուտով եթէ կը վերադառնայ, իսկ նրա օրինակը, որպէս

անկախ հեռուստայիքի, վարակիչ կը լինի միւս հ/ը-ների համար:

- Պրն. Աճեմեան, ՀՀ ԱԺ-ում Մարտի 1-2-ի դէպքերը հետաքննելու նպատակով յանձնաժողով է ստեղծուել: Դուք հաւատ ընծայո՞ւմ էք այդպիսի յանձնաժողովի անկողմնակալութեան նկատմամբ:

- Նախապէս ոչինչ ասել չեմ կարող, սակայն այդ եւ նոյն նպատակով ստեղծուած ցանկացած այլ յանձնաժողովի համար մարտեան իրադարձութիւնների մեղաւորներին բացայայտելը ու մեղաւորներին պարզելը պէտք է գերնպատակ լինի, որպէսզի հերթական անգամ հասարակութիւնը չհիասթափուի՝ բախուելով անգործութեան մասնուած հերթական կառույցին: Բացի այդ, պէտք է փոխհատուցում ստանան Մարտի 1-ի զոհերի ու տուժածների հարազատները:

- Ի՞նչ ակնկալիքներ ունէք եւսիւ առաջիկայ նստաշրջանից:

- Այն քաղաքականութիւնը, որն այս ընթացքում վարել է Հայաստանը՝ երբեք չի համընկել այն սպասելիքների հետ, որոնք ունի մեր երկրի հանդէպ Եւրոպան: Այսօր չի կարելի չնկատել այն մեծ ճեղքը, որն առաջացել է Հայաստան-Եւրոպա յարաբերութիւններում: Տարիների ընթացքում գործադրուած մեծ ջանքերը՝ մեր երկրում ժողովրդավարութիւն արմատաւորելու, մարդու իրաւունքների պաշտպանուածութեան, կոռուպցիայի դէմ պայքարի ուղղութեամբ, արդիւնք չեն տուել: Չասենք, որ Եւրոպայի համբերութեան բաժակը լցուել է, բայց այդ բաժակը դատարկ էլ չէ:

- Ի՞նչ չափով էք կարելորում սփիւռքի գործօնը առկայ քաղաքական ճգնաժամը յաղթահարելու ուղղութեամբ:

- Մենք անհրաժեշտութիւն ենք համարում հայրենիք-սփիւռք կապն ապահովող մարմնի ստեղծումը, որպէսզի այդ մարմնի միջոցով կարողանանք համագրել առ-

կայ խնդիրներն ու միակամութեամբ, համատեղ ջանքերով փորձենք դրանց լուծումներ տալ: Ս.Դ.հնչակեան կուսակցութիւնը միշտ պատրաստ է համագործակցել հայրենիքի հետ:

- Իսկ ի՞նչ դիրք ունեն Հայաստանում ընթացող պրոցեսների նկատմամբ աւանդական միւս կուսակցությունների՝ ՀՀԴ-ի եւ ՌԱԿ-ի ար-արագատակամ կուսակցութեան սփիւռքի կառույցները եւ արդեօ՞ք համագործակցում էք դրանց հետ առկայ ճգնաժամը յաղթահարելու համար:

- Դժբախտաբար, երբ Հայաստանում Մարտի 1-ի իրադարձութիւնները տեղի ունեցան, մենք դիմեցինք ՀՀԴ-ին ու ՌԱԿ-ին, որպէսզի միասնաբար հանդէս գանք ու փորձենք լուծումներ առաջադրել, սակայն արձագանք չստացանք: Ներկայ պահին մեր յարաբերութիւնները սառեցուել են, թէեւ չէի ասի, որ հակադիր կողմերում ենք: Սակայն Հնչակեան կուսակցութիւնը, ի մի բերելով վերջին շրջանում տեղի ունեցած իրադարձութիւնները, կանգնած է ոչ թէ իշխանութիւնների, այլ ժողովրդի կողքին: Մեր նպատակն է, որպէսզի Հայաստանն ունենայ միմիայն արդար ընտրութիւնների արդիւնքում ընտրուած, լեգիտիմութեան դեֆիցիտ չունեցող իշխանութիւններ: Այլագոյն ոչ լեգիտիմ իշխանութիւնները միշտ խնդիրներ են ունենում դրսում, վերջիններիս նկատմամբ տարբեր կարգի ճնշումներ են գործադրուում՝ դրանցից բխող անցանկալի հետեւանքներով: Մեր կուսակցութեան քաղաքականութիւնը, ժողովրդի հետ, ժողովրդի համար է սկզբունքի վրայ է կառուցուած, եւ լիայցոյս ենք, որ սփիւռք-հայրենիք գործակցութեամբ կը կարողանանք հարաւորինս շուտ յաղթահարել ստեղծուած ճգնաժամը: Միայն այդ պարագայում է, որ հնարաւորութիւն կ'ունենանք լուծել մեր երկրի առաջ ծառայած միւս խնդիրները:

ՎԱՐՉՈՒ ՄՐԱԸ ՓԱՍՍԻՏԻԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

THE QUALITY AND SAFE CHOICE... AGBU PASADENA HIGH SCHOOL 2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104 (CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET) 2008-2009 SCHOOL YEAR OPEN ENROLLMENT GRADES: 9-12 COLLEGE PREPARATORY ACADEMIC PROGRAM HONORS & AP LEVEL INSTRUCTION FOR MORE INFORMATION, PLEASE CALL 626-794-0363

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՈՒԻԼ ԸԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆԻ ՇԵՏ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂԲԱՆ

Կարգ մը վիճակագրություններ.

Երկար ամիսներ, շուրջ 15-16 ամիսներ, տեղի միջ-կուսակցական յոգնեցուցիչ, ծախսալից եւ այլ՝ մտահոգիչ նախագահական ընտրապայքարէ մը ետք, տեմոքրատ կուսակցութեան նախագահական թեկնածու Պարաք Օպամա ի վերջոյ պիտի ապահովէր իր կուսակցութեան պահանջած պատգամաւորներու թիւը, եւ ինքզինք նշանակէր նախագահութեան թեկնածու: Միւս ճակատը, Հանրապետական կուսակցութիւնը, արդէն իսկ ամիսներ առաջ նշանակած էր իր թեկնածուն, յանձին ձօն Մ.քէյնի: Այս վերջինը արդէն իսկ սկսած է իր պայքարը, նախ յստակացնելու իր արժանի հանրապետական մը ըլլալու պարագան, եւ ապա մշակելու իր «սթրատեկիան»_մարտավարութիւնը պայքարելու տեմոքրատիկ թեկնածու Օպամայի դէմ, մղելով «ալա ամերիկեան» ընտրապայքար մը թէ իր կուսակցութեան թէկնածու յստակացնելու, եւ թէ իր հակառակորդ Օպամային թեկնածութեան տկարութիւնները խոչորացոյցի տակ ներկայացնելու: Մ.քէյնի թեկնածութիւնը, շիտակ կամ խոցելի, ընդհանրապէս եւ մանաւանդ տեմոքրատներու կողմէ, Պուշի իշխանութեան Յրդ շրջանի շարունակութիւնը: Թէեւ Մ.քէյն կը ժխտէ այս ամբաստանութիւնը, յայտնաբերելով ենթադրեալ կամ իսկական տարբերութիւններ իր եւ Պուշի իշխանութեան միջեւ, մարդոց պատկերացումին մէջ, Մ.քէյն կը մնայ ենթակայ Պուշի իշխանութեան ներքին եւ արտաքին մարզերու քաղաքական որոշիչներու ենթարկուող մը, յատկապէս արտաքին քաղաքական մարզէն ներս սկսուած եւ տակաւին շարունակուող իրաքեան եւ աֆղանիստանեան պատերազմներու վիճակին մէջ: Յաճախ կը յիշուի Մ.քէյնի այս ձախաւեր յայտարարութիւնը որ, եթէ պէտք ըլլայ, Ամերիկա կրնայ նոյնիսկ 100 տարի մնալ իրաքեան հարցին մէջ: Նաեւ Մ.քէյն ունի տարիքի յառաջացած վիճակ մը, շուրջ 72 տարեկան, որ կը նկատուի տեսակ մը լուրջ անպատեհութիւն իր թեկնածութեան: Մ.քէյն ունի նաեւ կարծիքի եւ ուղեգծի լուրջ տարակարծութիւններ իր իսկ կուսակցութեան պահպանողական շրջանակներու հետ,

որոնք զինք շատ կը նկատեն խոցելի իր շարքայիններուն համար: Ամէն պարագայի, Մ.քէյնի թեկնածութիւնը ամենեւին ալ հեզասահ ընթացք մը չունի, եւ կրնայ լուրջ դժուարութեանց հանդիպիլ, նոյնիսկ իր սեփական շրջանակէն ներս: Ի հարկէ այս անպատեհութեանց կողքին, Մ.քէյնի թեկնածութիւնը ունի նաեւ շօշափելի առաւելութիւններ, յատկապէս արտաքին մարզէն ներս, ինչպէս նաեւ երկարատեւ տարիներու իր քաղաքական փորձին հետ կապուած: Մ.քէյն անշուշտ կը քննադատէ նաեւ իր հաւանական հակառակորդ Պարաք Օպամայի «անփորձաւորութիւնը», տարիքը, ինչպէս նաեւ իր քաղաքական փաթեթորմ-յայտագրի բովանդակութիւնը, որ կը տարբերի յատկապէս արտաքին քաղաքականութեան, տնտեսութեան, կրթութեան, բաց ջ մանաւանդ առողջապահական դրութեան հետ կապուած հարցերուն հետ: Ամերիկեան այժմու քուէարտոյցները ցոյց կու տան որ Պարաք Օպամա, շուրջ 6-15 կէտ աւելի առաջ է Մ.քէյնի վրայ, եւ սակայն ասոնք տակաւին նախնական եւ փոխուելիք կը նկատուին յառաջիկայ ամիսներու ընթացքին:

Մ.քէյն տակաւին չունի Օպամայի մը առինքնող, բեմական յաջող ճարտասանութիւնը զինք մասսաներու մօտ սիրելի դարձնելու համար: Առ հասարակ տափակ խօսող մըն է, որ դժուարութեամբ կը ներկայացնէ իր թէկնածու, առանց կարենալ զանգուածները խանդավառելու: Այս բոլորով հանդերձ, Մ.քէյն ունի Պուշի իշխանութեան, ինչպէս նաեւ պահպանողական շրջանակներու, մէջը ըլլալով հրէական լայիկ ամբողջական նեցուկը, որ կը մնայ իր գլխաւոր յենարանը:

This is not correct. It is true that Dr. Altounyan was the first doctor to bring an x-ray machine to Aleppo, but this was in 1896, one year after Reontgen invented the machine. (The life of this most interesting Altounyan family was published by the grand daughter of Dr. A. Altunyan, Taqui Altunyan. The book is titled “Chimes From a Wooden Bell”; Taurus & Co. London and New York. 1990, I wrote a review of this book in the English section of “Nor Gyank” weekly of Los Angeles. Sept. 29, 2005).

Dr. A. Altunyan represented Western Armenians at the Peace Conference in Paris in 1920. Once the conference ended he returned to his busy practice in Aleppo. An article in the British medical weekly the “Lancet” in 1927 stated that “the Altunyan Hospital in Aleppo had to date performed no fewer than 28,000 operations, some of them being plastic surgery. One can estimate that by 1950, more than 50,000 operations were done at Altunyan hospital, One of these patients being Jemal Pasha., Minister of Turkish Navy, and a second one, the writer of this review.

Section 8. Pages 425-444. The friendship of Sultan Mahmud II and Kazaz Artine Amira Bezjian.

(Continued next week)

ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՀԱԼԵՊԻ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿԸ



Նոր Սերունդ Մշակութային Միութեան «Անդրանիկ» թատերախումբը

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆՆԱՆ

Վերջերս Նոր Սերունդ Մշակութային Միութեան «Անդրանիկ» թատերախումբը, որ Հալեպի հնագույն խումբերէն մէկն է, կարպիս Լեփեճեանի բեմադրութեամբ հանրութեան ներկայացուց ուսմանացի» հանրահռչակ թատերադերձի՝ Իոն Լուքա Քարաճիալէի «Կորուսած Նամակը» հանրայայտ բիւսը, որ աշխարհի շատ մը բեմերու վարդը եղած է:

Ինչո՞ւ: Որովհետեւ այդ բիւսով հեղինակը ոչ թէ գաւեշտախաղ մը յօրինած է այլ անարգանքի սիւնին քամած է ընդհանրապէս այն խարդաւանքի դիմող մարդիկը, որոնք իրենք գիրենք ժողովուրդին իբր թէ բարեկեցութեան ջանադիր կ'ըլլան, ընտրուելով որպէս ղեկավարներ:

Խոստումները բազմապիսի են: Խարդաւանքները՝ առաւել եւս – կաշառք, ստախօսութիւն, ըստ տեղի ու մարդոց՝ ողորմ կամ սպառնալիք մէկ խօսքով կը դիմեն կարելի եւ անկարելի բոլոր միջոցներու – թմրեցնելու համար ժողովուրդին զգոնութիւնը որպէսզի ընտրութիւններու ընթացքին առաւելագոյն ձայներու տիրանան ու անկէ ետք՝ մոռնալու համար ժողովուրդը:

Նման այդպէս կոչուած ճարպիկ մարդոց տրուած ձայնը անբանալի կղզանք մըն է բանտի մը խոցի դրան ազդեցուած, ու բանտարկեալը՝ ձայնը տուողն է: Այսինքն ընտրողը, ենթակային մեղրածոր խոստումներէն խաբուելով ինքնաբանտարկութեան դատա-

պարուած կ'ըլլայ ինքզինք պարզապէս:

Քարաճիոզէի այս բիւսին մէջ եթէ ծիծաղի առիթներ կան, անշուշտ որ կան, անոնք բոլոր ծիծաղ յառաջացնելու համար չէ որ գրուած են: Գրուած են, ժողովուրդը աշխարհութեան հրաւիրելու համար:

Մեր օրերուն սակայն, յատկապէս Սփիւռքի մէջ, հանդիսատեսը թատրոն կ'երթայ օրուան յոգնութենէն ձերբազատուելու համար, խնդալու համար:

Ո՛վ կրնայ խնդալու դէմ ըլլալ: Մինչեւ իսկ, խնդալը, բժշկականօրէն կը վերափոխէ մարդը:

Բայց այդ երբեք չի նշանակեր, որ նման բիւսներ բեմ բարձրացնողը ամէն ճիգ ի գործ պիտի դնէ որպէսզի ներկայ հասարակութենէն խնդուք կորզէ:

Ահա թէ ինչո՞ւ բեմադրիչ՝ Կարպիսի Լեփեճեանի ընտրած այս բիւսը ունէր առաքելութիւն մը՝ մեր ունկնդիրներուն ճաշակը բարձրացնելու առաքելութիւնը:

Բայց հարց պիտի տաք Հալեպի գաղութը երբեւէ ունեցած է թատերական այնպիսի խումբ մը, որ կազմուած ըլլար արհեստավարժ անհատներէ, որոնք բեմը դարձնէին դպրոց եւ ինչու չէ համալսարան ու կեանքը վերադարձնէին մեզի բեմէն այնպէս՝ ինչպէս այդ կեանքը կ'ընթանայ բեմէն դուրս մեր առօրեային ընթացքին:

Լեփեճեանը, որպէս խումբին գորավարը ունէ՞ր նման պատրաստութեան տէր մարդիկ: Ան

Շար.բ էջ 19

ԹՈՒՐԵՒԱ ԲԱԲԳԵՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՋ

Պոլսահայ մամուլի եւ թրքական կարգ մը թերթերու համաձայն՝ ԱՄՆ-ի Արեւելեան Թեմի Նիւ ձըրքիի Հայաստանեայց Առաք. եկեղեցուց մէջ ծառայող Տ. Բաբգէն Ծ. Վրդ. Անուշեան, անակնկալ կերպով Անգարա ժամանելով, հանդիպումներ ունեցած է տեղւոյն թրքական դիւանագիտական շրջանակներու հետ: Նշենք նաեւ որ 50-ամեայ այս հոգեւորականը ծնած է Իսթանպուլ եւ անդամ է Երուսաղէմի Ս. Յակոբ վանքի Միաբանութեան:

Կը կարծուի թէ Բաբգէն Ծ. Վրդ. այժմէն իսկ իր թեկնածութիւնը կ'ուզէ յառաջ տանիլ Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան յառաջիկայ հաւանական ընտրութեան պարագային: Արդարեւ իր այս արարքը Պատրիարքարնի հոգեւոր խորհուրդին կողմէ նկատուեցաւ Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան հոգեւոր լիազօրութիւններու սահմաններու կողմից խախտում:

ՍՈՒՏԱՆ ՀԱՅ ՕԴԱՉՈՒ ՄԸ ՄԱՅՍԱԾ

Անցեալ Ուրբաթ, Սուտանի մէջ տեղի ունեցած օդանաւային արկածին հետեւանքով մահացած է բեռնատար օդանաւի անձնակազմը: Արդարեւ, ուսական «Անթոնով ՎՆ 12» բեռնատար օդանաւը Խարթում-մէն Ջուբա ուղեւորուելու պահուն կլիմայական վատ եղանակի բերումով արկածահար եղած է: Անձնակազմի ութ անդամներէն մին հայ մըն էր: Մնացեալները Ուքրանացի եւ սուտանցիներ էին:

ԻՏԱԼԻԱ ՁԵՐԲԱՎԱԼՈՒԾ ԵՆ 5 ՀԱՅԵՐ

Իտալիոյ Լացիօ շրջանի ոստիկանութիւնը Հռոմի Հայաստանի դեսպանատան գեկուցած է թէ ձերբակալուած են Հայաստանի 5 քաղաքացիներ՝ Արթիւր Ասատրեանը, Դաւիթ Ղազարեանը, Վահէ Բուդաղեանը, Միհրան Մկրտիչեանն ու Տիգրան Գիւրճեանը: Նշառած անձերը ձերբակալուած են յանցանք գործելու պահին՝ սպանութիւն կազմակերպելու կասկածանքով:

ՎՐԱՍՏԱՆ ՀԱՅԱՋԳԻ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԴ ՆԱԽԱԳԱՐԻ ԽՈՐՀՐԴԱՎԱՆ

Վրաստանի Խորհրդարանի նախկին հայ երեսփոխան Վան Բայբուրդ, վերջերս նախագահ Միխայիլ Սաակաշվիլիի կողմէ նշանակուած է Վրաստանի Հանրապետութեան նախագահի խորհրդական: Վան Բայբուրդի լիազօրութեանց սահմաններուն մէջ կ'իշխան ազգային փոքրամասնութիւններու եւ տարածաշրջանային յարաբերութիւններուն վերաբերող հարցեր: Նշենք նաեւ որ այս նոր նշանակումը խոր զայրոյթ յառաջացուած է Վրաստան բնակող ազգայնացիներու մօտ:

ՖՐԱՆՍԱ ԱՐԱ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ ԵՒ ՊՐԻԱՆԻ ՆՈՐ ԳԻՏԸ ԲԱԴՏԿԵՂԻ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ

Փարիզի «Փաբէթօր» ականուր հաստատութիւնը գլխաւորող Տօթթ. Արա Յովհաննէսեան, Ժան Փոլ Պրիանի հետ քաղցկեղի դարմանումի մասին նոր ուղի մը բացած են: Անոնք միասնաբար պատրաստած են նոր բժիշկ մը գոր կոչած են «էյչ, Պի 19»:

Արդարեւ, այս բժիշկը կրնայ արգելք հանդիսանալ քաղցկեղի բժիշկներու բազմացումին, նաեւ արգելք կը հանդիսանայ զանոնք սնանոց մագերակներու գոյացումին:

Տօթթ. Ա. Յովհաննէսեան ծնած է Հալեպ, 1948-ին:

www.massisweekly.com
massis2@earthlink.net

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS BELINA AND THE SAHILAH DANCERS.

authentic cuisine
full hookah bar
VIP membership
full cocktail bar
live belly dancing
live music and DJ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB
626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ՎԱՅ ԴՊՐՈՑ

ՐԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ 2008-Ի ԱՄԱՎԵՐՁԻ ՐԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Ամէն շրջան ունի իր աւարտը եւ ամէն աւարտ չի նշանակեր անպայման վերջակէտ, այլ՝ ընդհանրապէս նոր հանգրուանի մը սկզբնաւորութիւնը:

Այս սկզբունքէն մեկնած, Հայ Քոյրերու Վարժարանը 2007-2008 տարեշրջանը եւս յաջողութեամբ բոլորեց իր երեք բաժիններով՝ Մանկապարտէզ, Նախակրթարան եւ միջնակարգ, անոնք բոլորեցին իրենց ուսումնական ծրագիրները, պատրաստ փոխանցուելու յաջորդ ուսումնական շրջանին:

Երեք մակարդակներու վրայ ալ, շրջանաւարտները գեղեցիկ հանդիսութիւններով ստացան իրենց վկայականները, հպարտօրէն հարստացնելով Հայ Քոյրերու Վարժարանի շրջանաւարտներու ցանկը:

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Շաբաթ, 14 Յունիսի առաւօտեան տեղի ունեցաւ մանկապարտէզի հանդէսը անհաւատալի գեղեցկութեամբ:

Այս տարուան մանկապարտէզի հանդէսին նիւթն էր՝ «Համբարձումը» անոնք երգերով, պարերով, պատումներով, կատակներով բացատրեցին եւ գործադրեցին հայկական հին եւ հաճելի վիճակ հանելու սովորութիւնը: Խանդավառեցին ներկաները հայկական

ունեցաւ իր աւարտական պատշաճ հանդիսութիւնը: Հինգերորդ կարգի Անգլերէն լեզուի դասատու՝ պրն. Էտմոն Համբարձումեանի խօսքէն ետք, հայերէն լեզուով իր սրտի խօսքը ընթերցեց շրջանաւարտ Ալէք Քիլիսլեան եւ անգլերէն՝ Շահէ Քազազեան: Շրջանաւարտները գեղեցկօրէն ասմունքեցին Հայ Լեզուի նուիրուած բանաստեղծութիւններու համադրում մը՝ պատրաստութեամբ Հայերէն լեզուի դասատու՝ Տիկ. Մէրի Գուլուսեանի եւ անգլերէնով ներկայացուցին օրուան պատշաճ բանաստեղծութիւն մը, ապա երգեցին երկլեզու երգեր՝ վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի տիկ. Վարդուհի Պաղտասարեանի ղեկավարութեամբ:

Այսպիսով, Ուրբաթ, Յունիս 20, 2007ին Հ. Ք. Վարժարանի 5րդ դասարանի աշակերտները ստացան նախակրթարանի համապատասխան վկայական, անցնելու աւելի պատասխանատու շրջան մը՝ միջնակարգ:

ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Ութերորդ դասարանի պարագային, աշակերտները ոչ միայն հրաժեշտ պիտի տային միջնակարգին՝ այլ նաեւ պիտի բաժնուէին իրենց համար երկրորդ տունի վերածուած՝ վարժարանէն, հոն ձգելով իրենց կեանքին առաջին շրջանի անմոռանալի յիշատակները:

Առ այդ, անոնց հրաժեշտի

ւարարութեամբ բաժնուեցան կրկին հանդիպելու յաջորդ Կիրակի, Հայ Քոյրերու Վարժարանի սրահէն ներս:

Կիրակի, Յունիս 22, 2008ին, որոշուած ժամուն շրջանաւարտութեան պաշտօնական երաժշտութեան ներքեւ Հ. Ք. Վարժարանի 2008 տարուան շրջանաւարտները յաղթական մուտք գործեցին վարժարանիս «Դանիէլեան» սրահէն ներս, գրաւեցին իրենց յատկացուած տեղերը:

Հանդիսութիւնը սկսաւ «Տէրունական» աղօթքով ապա Հայաստանի Հանրապետութեան քայլերգով եւ շարունակուեցաւ պաշտօն-

զանագանել լաւն ու բարին, վատն ու չարը: Անգլերէնով իր սրտի խօսքը ընթերցեց Սպաներէն լեզուի դասատու՝ տիկ. Քէթի Քազազեան: Հայերէն լեզուով հանդէս եկաւ հայերէն լեզուի դասատու՝ տիկ. Լինտա Գանտիլեան, ան անդրադարձաւ սփիւռքի տարածքին Հայաստանի անմահ գործընթացին մէջ, հայկական վարժարաններու ունեցած առանցքային դերակատարութիւնը, եւ նկատի ունենալով որ 2008 տարին կը գուգադիպի Անարատ Յղութեան Քոյրերու Միաբանութեան հիմնադրութեան 160 ամեակին ան աւելցուց. «...եթէ մենք չունեցանք հայրենի



Միջնակարգի 8րդ դասարանի շրջանաւարտները

նական խօսքերով:

Առաջին հերթին խօսք առաւ վարժարանի տնօրէնուհի Քոյր Լուսիա: Ան շնորհաւորեց ծնողները, շրջանաւարտները եւ յորդորեց աշակերտները, որ իրենց ապագայ կեանքի ընթացքին օգտագործեն բոլոր այն քրիստոնէական արժէքները, որոնք որպէս գանձ ստացան այս վարժարանէն, որպէսզի կարողանան իրենց կեանքի ընթացքին

հորը՝ տասնեակ տարիներ մեզ ներշնչողը եղաւ հայ դպրոցը: Պատիւ այն մարդկանց, որոնք իմաստութիւնը ունեցան դապրոցաշրջութեան ազնիւ գործին, որուն լաւագոյն օրինակն է Անարատ Յղութեան Հայ Քոյրերու Միաբանութիւնը իր դպրոցներու ցանցով...», իսկ խօսքը ուղղելով աշակերտներ-

Շաբ.ը էջ 17



Նախակրթարանի 5րդ դասարանի շրջանաւարտները

շուրջպարերով, որոնց գլուխ գործոցն էր վերջինը՝ երբ բոլոր շրջանաւարտները միացան եւ պարեցին Արամ Յովհաննէսեանի «Տէր Ատուած» երգի ընկերակցութեամբ, իսկական հայկական խորհրդանշան միջնորդութեամբ ստեղծելով եւ խանդավառելով ծնողները եւ հանդիսատեսները:

Մանկապարտէզի Տնօրէնուհի՝ Տիկ. Սոնա Գազանճեանի բացման խօսքով սկիզբ առած հանդիսութեանը իր աւարտին հասաւ Հ. Ք. Վարժարանի Տնօրէնուհի Քոյր Լուսիայի փակման եւ շնորհաւորական խօսքերով, որ նաեւ աւարտն էր մանկական հեքիաթային երեք տարիներուն:

Այսպիսով, Մանկապարտէզի շրջանաւարտները պարելով, երգելով եւ արտասանելով վկայուեցան ու մանկական աշխարհին հրաժեշտ տուին, մեծ ուսուցումով մը անցնելով նախակրթարան:

ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, Յունիս 20 2008-ին նախակրթարանի 5րդ դասարանը

արարողութիւնը սկսաւ եկեղեցիով: Կիրակի, Յունիս 15-ին, Կլէնտէյլի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին տարբեր հանդիսաւոր երեւոյթ մը ստացած էր, այդ օր արարողութեան կը մասնակցէին Հ. Ք. Վարժարանի աւարտական դասարանի աշակերտները: Անոնք եկած էին գոհաբանութեան աղօթք վեր առաքելու, այն բոլոր բարիքներուն համար, որ վայելեցին Հայ Քոյրերու Վարժարանէն ներս, շնորհակալութիւն յայտնելու իրենց հոգիներուն մէջ Քրոստոնէութեան առաջին սերմերը ցանող Առաքինազարդ քոյրերուն, իր պատարագներով եւ դաստիարակիչ քարոզներով զիրենք յորդորող Վարդապետ՝ Հայր Անտոն Սարոյեանին, դաստիարակներուն ու ծնողներուն: Մեծ թուով հաւատացեալներու ներկայութեան աշակերտները իրենց ուխտը կատարեցին խոստանալով ըլլալ լաւ քաղաքացիներ եւ պատուաբեր հայ քրիստոնէաներ:

Յուզումնալից արարողութեան աւարտին ծնողք, աշակերտ, պատասխանատու՝ հոգեկան մեծ բա-

ՅՈՒՆԻՍԻԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ՆՈՒԻՐՈՒԱՍ ԱՇԽԱՐՀԱՀՌՁԱԿ ՄԵԾԱՆՈՒՆ ԳՐՈՂ ՈՒԻԼԻԸՄ ՍԱՐՈՑԵԱՆԻ
ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ
 Կազմակերպութեամբ՝
Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան Հովանաւորութեամբ՝
Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմին

Բացման Խօսք՝
ՏՕԳԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
 Բանախօսներ՝
ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ
 Դրուագներ Սարոյեանի Կեանքէն
ԹՈՐԳՈՄ ՓՈՍԹԱՃԵԱՆ
 Նախագահ Ամերիկայի Հայ Գրողներու Միութեան Հանդիսավար՝
ԼԻԼԻԹ ՔԷՀԷՆԵԱՆ
 Գեղարուեստական Բաժին
 Ընթերցումներ Ուիլիըմ Սարոյեանի Գործերէն

Կիրակի, Յուլիս 13, 2008 Կ. Ե. Ժամը 5:00ին
Հայց. Եկեղեցւոյ Առաջնորդարանի
«Գալայնեան» Սրահին մէջ
3325 Glenoaks Blvd. Burbank CA 90504
Մուտքը ազատ

ՐԱՅ ԴՊՐՈՑ

ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՅԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ 2007-2008 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ԵՒ 2008-2009 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ

ՏՕԳՔ. ԱՐԱ ԻՄԿԻԿԵԱՆ

Աստուծոյ շնորհքով եւ առաջնորդութեամբ, Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանը մեծ յաջողութիւններով աւարտեց ընթացիկ 2007-2008 տարեշրջանը: Հաւատարիմ մնալով մեր հաւատքին եւ սկզբունքներուն, պետական ուսումնական ծրագիրները անթերի ամբողջացնելու կողքին, մեր թանկագին սաներուն դասաւանդեցինք Աստուածաշունչը, Հայոց լեզուն, դարասուր պատմութիւնը եւ մշակութիւնը:

Վարժարանը իր մանկամասերէն մինչեւ տասներկրորդ դասարաններուն մէջ, այս տարի ընդունեց շուրջ 385 աշակերտներ: Վարժարանի խնամակալ հոգաբարձութիւնը, նոր տնօրէն պրն. Շահէ Կարապետեանը եւ փորձառու ու որակեալ ուսուցչակազմը, միասնական ջանքերով կատարեցին ամէն բան ունենալու բազմաբեղուն եւ

գրողարանը, նաեւ ֆետրուար մային, «Սքոլաստիք» ընկերութեան եւ այլ հայկական գրախանութներու մասնակցութեամբ ունեցանք գիրքերու ցուցահանդէս-վաճառք մը: Հայոց լեզուի ուսուցումը աւելի բարելաւուեցաւ փորձառու ուսուցիչներու մեր կազմին միացումով: Որպէս նորութիւն այս տարի սկսանք եւ Տիրոջ կամքով, յետագային ալ պիտի շարունակենք, «Հայերէնը որպէս երկրորդական լեզու» դասընթացքները, յատկապէս օտար վարժարաններէ տեղափոխուած աշակերտներու համար:

Տարեշրջանի ընթացքին մեր աշակերտները առիթով ունեցան մասնակցելու բազմաթիւ այլ արտադպրոցային գործունէութիւններու, ինչպէս ճարտասանութեան, ուղղագրութեան եւ այլ մրցանքներու:

Վարժարանէն ներս ունեցանք նաեւ երաժշտական, թատերական եւ ասմունքի երեկոներ, արուեստի,

ման հանդիսաւոր արարողութիւնը: Երեք խումբ շրջանաւարտներու եւ ուսուցիչներու հանդիսաւոր մուտքէն ետք, ճորդ դասարանի սաները արտասանեցին «Հայ Աշակերտին Ուխտը» եւ «Դրօշակի Հաւատարմութեան Ուխտը»: Տիկ. Լիւսի

ՆՈՐ ՏԱՐԵՇՐՉԱՆ
2007-2008 տարեշրջանը հազիւ աւարտած, մենք կը գտնուինք ներ մարտահրաւէրներու ընդառաջ: Այսօր արդէն, Սահակ-Մեսրոպի մեծ ընտանիքը աշխատանքի



Միջնակարգ բաժնի շրջանաւարտները

Ապաճեանի առաջնորդութեամբ հնչեցին զոյգ քայլերգները, որմէ ետք մեր սաները աղօթքով եւ բարի գալուստի խօսքերով ողջունեցին ներկաները: Հինգերորդ դասարանցիները կատարեցին «Ախթամար» երգը, որմէ ետք տնօրէն պրն. Շ. Կարապետեան եւ դաստիարակներ Տիկ. Ս. Պատալեան եւ Օրդ. Ճ' Պոքրնուկըն դասարանի 30 շրջանաւարտներուն յանձնեցին վկայականները եւ պատուոյ ցանկի մրցանակները:

Ապա ճորդ դասարանի 27 աշակերտներ, տնօրէնէն եւ դաստիարակ Տիկ. Ա. Յակոբեանէն ստացան իրենց վկայականները եւ մրցանակները: Օրուան գլխաւոր բանախօս Տիկ. Այլին Պէգճեան, իր խօսքին մէջ շրջանաւարտ աշակերտներուն խորհուրդ տուաւ յարատեւ աշխատիլ եւ ձգտիլ լաւագոյնին: Պատկառելի տիկնոջ Յուսիկ Բանքէն ետք, տնօրէնէն եւ դաստիարակ պրն. Մ. Գրիգորեանէն, 12-րդ դասարանի 9 շրջանաւարտներ ստացան իրենց դպրոցական երկար տարիներու

լծուած է 2008-2009 տարեշրջանին, աւելի ընդարձակ եւ արդիական վայր տեղափոխուելու աշխատանքներուն: Կոչ կ'ուղղենք Փաստինայի եւ շրջակայքի հայ ծնողներուն, որպէսզի կատարեն նիւթական գոհողութիւններ եւ անպայման իրենց զաւակները վստահին հայ վարժարանին՝ յատկապէս հայր հայ պահելու սրբազան գործին մեծապէս նպաստող Սահակ-Մեսրոպ Հ. Ք. վարժարանին: Վարժարանը ունի Մանկամասերէն մինչեւ 12-րդ դասարաններ: Քալիֆորնիոյ նահանգային պահանջներուն (state standards) համապատասխան ուսումնական ծրագիր, որն ընդունուած եւ բարձր գնահատուած Քալիֆորնիոյ Համալսարանի, ուսումնական խորհուրդին կողմէ: Որակաւորում WASC եւ ACISI կազմակերպութիւններէն: Հոգեւոր եւ ապահով շրջափակ: Աստուածաշունչի, Հայոց լեզուի եւ պատմութեան դասաւանդում: Գեղարուեստական-մշակութային գործունէութիւնք՝ երգ ու երաժշտա-



Երկրորդականի բարձրագոյն բաժնի շրջանաւարտները

Բազմերանգ տարեշրջան մը:

ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր վարժարանը միշտ ձգտած է եւ յաջողած է իր սաներուն տալ բարձրորակ երաժշտական կրթութիւն: Այս տարի եւս, մեծատաղանդ երաժիշտներ՝ Ժաննա եւ Արտաշէս Սինանեաններու, համբերատար եւ բժախնդիր աշխատանքի շնորհիւ, առաւել եւս բարձրացուցին այդ մարզի մակարդակը: Բոլոր տօներուն եւ հաւաքոյթներուն՝ Թարգմանչաց, Սբ. Մնունդ, Վարդանանց, Ապրիլ 24 եւ յատկապէս Գարնանային համերգին, մեր աշակերտական նուագախումբերը, երգչախումբերը եւ մենակատարները անթերի երոյթներ ունեցան, հիացնելով ներկաները:

Տարեշրջանի ընթացքին մեր մարզական շարժումը մեծ վերելք ապրեցաւ շնորհիւ վարժարանի նոր մարզական ղեկավար պրն. Ճէք Տապաղեանի եռանդուն աշխատանքին: Ամիսներ շարունակ, անոր եւ այլ օգնական մարզիչներու առաջնորդութեամբ, մեր սաները ունեցան կանոնաւոր մարզման պահեր, որոնց շնորհիւ ալ ՀՄԼՄ, «ՔԱՀԱՄ»-ի եւ ՀԲԼՄի կազմակերպած մրցաշարքերուն հասան մեծ նուաճումներու:

Քաջալերելով ընթացասիրութիւնը, մեր աշակերտներուն տրամադրեցինք հայերէն եւ անգլերէն գիրքերով հարուստ, վարժարանի

գիտութեան աշակերտական ցուցահանդէսներ:

ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Յունիս 6-ին տեղի ունեցաւ մեր նախադպրոցական բաժնի ամալերջի հանդէսը, «Թող բարգաւաճի մեր հայրենիքը» նշանաբանով: Բացման խօսքը կատարեց նախադպրոցական բաժնի այս տարի նշանակուած պատասխանատու՝ Տօքթ. Մէրի Իսկիլեան: Մեր մանուկները բացառիկ հասունութեամբ ներկայացան եւ հիացուցին հանդիսատեսները իրենց երգերով, պարերով եւ արտասանութիւններով:

Յունիս 13-ին տեղի ունեցաւ վարժարանի մանկապարտէզի ամալերջի հանդէսը, «Ոսկի Ձկնիկ» անուանումով: Ծառիկ դասարանի 25 աշակերտներ ստացան իրենց առաջին վկայականները: Գեղարուեստական բաժինը դարձեալ ի յայտ բերաւ մեր փոքրիկներուն բազմատաղանդ ունակութիւնները: Գնահատելի է ուսուցչուհիներ՝ Տիկ. Նայք Աշիկէն ձիվալեանի եւ Լիւսի Ստեփանեանի եւ Տիկ. Ժաննա Սինանեանի բժախնդիր աշխատանքը: Վերջապէս Յունիս 19ի երեկոյեան, Փաստինայի առաջին Նազովրեցի եկեղեցու հանդիսասրահին մէջ, տեղի ունեցաւ նախադպրոցականի, Միջնակարգի եւ արդէն երկրորդ տարին ըլլալով, երկրորդականի բարձրագոյն բաժնի շրջանաւարտներու վկայականաց բաշխ-



Նախակրթարանի բաժնի շրջանաւարտները

աշխատանքին վարձատրութիւնը՝ վկայականները եւ մրցանակները: Յատուկ գնահատանքի եւ վարձատրութեան արժանացան տիկ. Սօնա Պատալեան, դպրոցէն ներս երկար տարիներ իր կատարած անխոնջ աշխատանքներուն համար, եւ տնօրէն պրն. Շահէ Կարապետեան նոր պաշտօնի վրայ իր առաջին տարին բացառիկ յաջող անցնելու համար: Երեկոն աւարտեցին «Հայ Մեր»-ով եւ Վեր. Տ. Շանլեանի փակման աղօթքով, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

կան գործիքներ, հայկական պար, ասմունք եւ թատրոն: Մարզական խմբակներ, մասնակցութիւն տարբեր միջդպրոցական մրցանքներու: Գիտական-ուսուցողական եւ հաճելի պտոյտներ: Շրջանաւարտ դասարաններու համար կազմակերպուած ճամբորդութիւններ, դէպի մայր հայրենիք եւ այլ նահանգներ: Վարժարանի գրասենեակը բաց է ամրան ընթացքին: Արձանագրութեան եւ այլ տեղեկութիւններու համար կրնաք անձամբ դիմել՝ 2501 Maiden Lane 5 Altadena կամ հեռաձայնել (626) 798-5020 թիւին:

ԹԲԻԼԻՍԻ ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀԻՒՐԱԽԱՂԵՐԸ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ԵՒ ԳԱՆԱՏԱՅՈՒՄ

2008 թվին, Սեպտեմբեր- Հոկտեմբեր ամիսներին՝ առաջին անգամ լինելով, Թբիլիսիի Պետրոս Ադամեանի անուան Պետական Հայկական Դրամատիկական Թատրոնը, 21 հոգիանոց խումբով պիտի ժամանէ Լոս Անճելըս: Միացեալ Նահանգների եւ Գանատայի տարածքին պիտի ներկայացուին Գաբրիէլ Սունդուկեանի «Պէպօ» եւ «Խաթաբալա», Գուրգէն Խանջեանի «Աւե-

րի գործունէութիւնը խթանելու եւ ժողովուրդը խանդավառելու ազգային մեկնակէտից՝ հաճոյքով գործի լծուեցանք, հիմնուեցաւ «Հայ Մշակոյթի Բարեկամներ», "The Friends of Armenian Arts" ոչ շահաբեր (non profit) միութիւնը, Միացեալ Նահանգների եւ Գանատայի տարածքին կապերի մէջ ենք հաստատութիւններու եւ անհատներու հետ, ստանձնած գործը յաջող ելքի



րակների պահանջները», Յուշին Գլադստոն Օ՛Նիլի «Սէրը ծփիների տակ», «Աղջկա սիեսացունները» եւ Փիէր Շէնտյի «Դուք ողջ լինէք» փիէսները՝ աւելի քան 18 խաղարկութեամբ:

Յասցնելու համար: Թբիլիսիի Պետրոս Ադամեանի անուան, Հայաստանից դուրս գտնուող միակ Պետական Հայկական Դրամատիկական Թատրոնը հարիւր եւ յիսուն երկու տարեկան է (152), կովկասում գործող ամենահին արհեստավարժ թատրոնը, նաեւ՝ հայ-

թատերախումբը պիտի գլխաւորէ Վրաստանի Խորհրդարանի նո-



րընտիր անդամ, Թբիլիսիի Պետրոս Ադամեանի Անուան Պետական Հայկական Դրամատիկական Թատրոնի գեղարուեստական ղեկավար, Վիրահայերի միութեան նախագահ, պարոն Արմենակ Բայանդուրեանը:

կական մշակոյթի ձեւաւորման, զարգացման եւ տարածման կարեւորագոյն օջախներից մէկը:

Հին Թիֆլիսը, Պոլսոյ պէս, հայ բազմալազոր սերունդների կեցութեան, ճոխութեան եւ բեղուն ստեղծագործական, մշակութային կեանքի մայրաքաղաքն է եղեր:

Ազգային մշակոյթին իրենց ծառայութիւնը այնտեղ են բերեր Գաբրիէլ Սունդուկեանը՝ Պետրոս Ադամեանը՝ Սիրանոյշը՝ Վահրամ Փափագեանը եւ շատ-շատ այլ մեծանուն երախտաւորներ:

Հայութիւնը գրեթէ իր բոլոր դիրքերը գիշած է Թբիլիսիում, նահանջ կ'ապրի կրթական եւ եկեղեցական մարզերու մէջ, ի բաց առեալ՝ հայկական թատրոնը, ուր կեդրոնացած է Թիֆլիսահայութեան սէրը, գուրգուրանքը, պաշտպանութիւնն ու համակ ուշադրութիւնը:

Կը խնդրենք, որ Հայ ժողովուրդը թատերախումբի խաղարկումներին իր ներկայութեամբ գնահատէ եւ ողջունէ թատրոնի 153-րդ տարեդարձը:

Պրն. Արմենակ Բայանդուրեանի առաջարկին ընդառաջելով եւ ելնելով Թիֆլիսահայութեանը ոգեւորելու, նրանց բարոյապէս նեցուկ կանգնելու, ինչպէս նաեւ՝ Լ.Ա. եւ այլուր հայ համայնքներում հայապահպան այլազան բնագաւառներ-

Անհրաժեշտ լուսաբանութիւնների համար կարող էք կապուել գրասենեակ (818) 637-2191:

Լոս Անճելըսում Թբիլիսիի Պետրոս Ադամեանի Անուան Հայկական Պետական Դրամատիկական Թատրոնի 2008թ. Հիւրախաղերի Կազմակերպիչ Յանձնախումբը՝

Հակոբ Մկրտչեան՝ (818) 568-7541, Ֆրեդրիկ Վարդանեան՝ (818) 303-5566, Անահիտ-Արաքսի Աճունեան (Մարգարեան)՝ (818) 257-8211

ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «ԱԶԱՊԱՀԵԱՆ ՏՈՀՄԸ ԴԱՐԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ»

ԱՐԱՔՍ ՏՊԱՐԱՆ 2008, Լոս Անճելըս

Վրէժ եւ Արմիկ Թոմպուլեաններու մեկենասութեամբ ներկայ «Աջապահեան Տոհմը Դարերու Ընթացքին» բանասիրական աշխատութիւնը լոյս ընծայուած է 2008-ին «Արաքս Տպարան»ի տէր եւ տնօրէն Նազարէթ Աջապահեանի նախաաձեռնութեամբ, Փաստաշնա: Թորգոմ Փոստաճեանի «Գնահատական» խօսքով նախաբանը կրող 115 էջերու մէջ ամփոփուած այս պատկերագրութիւնը, խնամեալ եւ կոկիկ տպագրութեամբ գրքոյկը, բանասիրական աշխատասիրութիւն մըն է դեռեւս Հեթում Արքայի օրերէն սեռած Աջապահեան Տոհմի ութը հարիւր տարիներու պատմութեան:




տութեան մէջ իրենց գնահատատելի աշխատասիրութիւնը ունին Ասպետ Մանճիկեան, Յակոբ Անասեան, Միքայէլ Ս. Արք. Աջապահեան, Գ. Յ. Զազմաքճեան, Տէր Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան եւ Վահրամ Հաճեան:

Մեր եկեղեցեցական կեանքէն ներս, Աջապահեանները ծանօթ են իբրեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջին եւ այլ մասունքներու անզուգական պահպանիչներ, նաեւ, մեր եկեղեցոյ մեծ թուով հոգեւորականներ՝ քահանայ, եպիսկոպոս ու կաթողիկոս նուիրաբերած տոհմ:

Այդ գրքին պատմագիտական ուսումնասիրութիւններու պատրաս-

HISTORY OF GHEVOND THE EMINENT VARDAPET OF THE ARMENIANS ՏԻՐ ԶԱՒԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

Տէր Զաւէն Արզումանեանի 8-10-րդ դարերու պատմաբաններու նուիրուած նախորդ շարք մը թարգմանական եւ ուսումնասիրական երկերու, եռահատոր «Ազգապատումի» եւ յատկապէս 2007-ին լոյս ընծայած «Stadies In Armaenian Church Origin, Doctrin Worship» աշխատասիրութիւններուն վրայ կը բարդէ ներկայ «History Of Ghevont, The Eminent Vardapet Of The Armenians -VIII Century-», (Պատմութիւն Ղեւոնդեաց, Մեծն Վարդապետի Հայոց (8-րդ Դար) վերնագրի տակ երկրորդ տպագրութեամբ, որ լոյս տեսած է 2008-ին: Աւագ Քհնյ. Հայրը, իր այս երկը կը ցօնէ հայրենիքի եւ Ա.Մ.Ն.-ի մէջ իր գիտաշխատութիւններով, հետազոտութիւններով եւ կատարելագործութիւններով ծանօթ գիտնական կնքահօր՝ Արամ Արզումանեանին:



նորդ Յովնան Արք. Տէրտէրեանի սրտի խօսքը: Ան կը գնահատէ «Պատմութիւն Ղեւոնդեաց, Մեծն Վարդապետի Հայոց» գրքին օգտաշատ բովանդակութիւնը, որ կուգայ հարստացնելու մեր եկեղեցական եւ պատմութեան գանձատունը: Նաեւ, Սրբազանը կ'ողջունէ աշխատասիրութեան անգլերէնի թարգմանութիւնը, զոր կատարած է հեղինակը ինքը, Տէր Զաւէն Արզումանեան:

Տէր Զաւէն Արզումանեան գնահատելի աշխատանք կատարած է անգլերէն եւ հայերէն լեզուներով գրած 210 էջերէ բաղկացած ներկայ լոյս ընծայած երկով: Ան կուգայ օտար աշխարհին ծանօթացնելու 8-րդ դարու մեր պատմագիր Ղեւոնդ Երեցը, եւ անով՝ հայոց պատմութիւնը, որ կը վերաբերի արաբական արշաւանքներու 156 տարիներու ժամանակաշրջանին: 638էն մինչեւ 788 թուական ժամակակից պատմիչ՝ Ղեւոնդ Երեց կը պատմագրէ Մերձաւոր Արեւելք եւ Հայաստան կատարուած արաբական արշաւանքներու մասի:

Գրքին նախաբան իր գնահատութեան մէջ, պատմաբան Robert H. Hewsen, հիմնուելով Ղեւոնդ Երեցի պատմագրական ժամանակագրական ճշգրտութեան, վստահելի տուեալներուն, պատմական իրողութիւններուն, եւ արձանագրութիւններով, նամակներով եւ այլ փաստաթղթերով հարստացած՝ ձեռք ձգուած գիտելիքներու ու աղբիւրներու վրայ, կը գրէ. «...կը հաւատամ, թէ Արեւմտեան Եւրոպան չունի Ղեւոնդ Երեցի ժամանակակից ոչ մէկ պատմաբան, որուն աշխատանքը ունենայ միեւնոյն տարողութիւնը»:

Համաձայն Տէր Զաւէն Արզումանեանի՝ տասերորդ դարուն ու անկէ ետք յայտնուած պատմիչներու ինչպէս Ստեփաննոս Տարօնեցի Ասողիկի, Միխիթար Անեցիի, Կիրակոս Գանձակեցիի եւ այլոց հաստատումով, արաբական արշաւանքները պատմագրող պատմաբանը հանդիսացած է Ղեւոնդ Երեց: Գիրքը կը պարունակէ Առաջ-

ՎԱՐՍԱՆԻՔՆԵՐ ԵՒ.. ՅՈՒՂԱՐԿԱԴՐՈՒԹԻՆՆԵՐ

ՄԱՐԻԷԹ ՄԻՆԱՍԵԱՆ-ՕՀԱՆԷՍ

Ընդհանուր առմամբ երբ յօդուածներ կը գրենք, ուրիշներուն վերաբերելու համար չէ որ կ'ընենք այդ, այլ՝ որովհետեւ մեր նպատակն է ժողովուրդին բարիքն ու բարեկարգումը եւ հեռացումը կոչը սովորութիւններէ եւ հին բարքերէ:

Օտար ամերու վրայ մեր այս միջավայրին մէջ ուրախ եւ տխուր առիթները յստակ նմանութիւններ ունին, հակառակ կրօնքներու տարբերութեան:

Նոյն վայրը, նոյն սրահները.. Ըլլան անոնք անձնական կամ հանրային, պանդոկներու սրահներ կամ եկեղեցիներ ու ժողովարաններ.. նոյն ակնարկներն ու սեղանները, իսկ հիւրասիրութիւնները՝ եթէ նոյնիսկ տարբեր եղան քիչ մը, ըստ առիթի տեղերու կարողութեան կամ ողբացեալին ընտանիքին նիւթական կարողութեան, վերջապէս կրօնական՝ բաժակն է մարդոց համար կարեւորը եւ.. կերուխումը:

Այս բոլորը տեղի կ'ունենան որովհետեւ մեծ թիւով շնորհաւորողներուն եւ սգաւորներուն իրենց մարդկային պարտականութեան ընդունելութեան համար, բնակարանները նեղ լինելու պատճառով, ի մասնաւորի եթէ մէկ օրուայ մէջ պիտի կատարուի այդ ընդունելութիւնը: Ասոր համար շքեղ սրահները վարձելու

մեծ ծախսերը միշտ բարձր են, այն սրահները որոնք անհամբեր կը սպասեն ուրախ եւ տխուր առիթներուն՝ փակելու համար կառուցման ծախսերը:

Կրնայ այս հարցը ունեւորներուն համար դիւրին ըլլալ եւ բոլոր անոնց համար որոնք կը հպարտանան եւ կը չափազանցեն իրենց ուրախ եւ տխուր առիթները նշելու, իսկ աղքատները եւ բոլորովին չունեւորները.. Աստուած անոնց օգնական ըլլայ:

Եթէ հարմարիքի եւ յուզարկաւորութեան ծախսերը ժողովուրդին մեծամասնութեան համար աժանանան եւ միանան վայրերը ու նմանին արարողութիւնները, ասոր մէջ կրնայ տեսնուիլ քիչ մը հաւասարութիւն, գթութիւն եւ ինսայողութիւն, բոլորին համար:

Հետեւաբար, հարմարիքի վայրը թող ըլլայ ուրախութեան համար մի միայն եւ ոչ թէ վատնումի, ցուցամոլութեան եւ երեւնալու.. եւ ուրիշ ատեններ ալ կուրի.. իսկ սուգի վայրն ալ թող ըլլայ ողորմածութեան եւ ներողամտութեան վայր եւ ոչ թէ հրճուանքի եւ պարծանքի.. կարգ մը պարագաներուն:

Կը մաղթենք որ ձեր բոլորին տուներէն անպակաս ըլլան ուրախութիւնները, իսկ ձեր ողբերգութիւնները ձեր տխրութիւններուն վերջինը ըլլան:

ՀԱԼԷՊԻ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿԸ

Շարունակուած էջ 13-էն

ստիպուած էր գոհանալ իր տրամադրութեան տակ ունեցած սիրողական խումբով:

Այս բոլորը ըսելով յանկարծ չկարծէք թէ այս խումբին լարուած ճիգերուն հանդէպ յարգանքի եւ գնահատութեան պակաս մը պիտի ունենամ:

Ընդհակառակը՝ թէեւ ոչ շուայլ բայց խօսքս պիտի ըլլայ քաջալերական:

Արդարեւ, ատենը հեղ մը գործող «Անդրանիկ» թատերախումբին այս ճիգը խորապէս գնահատելի կը գտնեմ ու կրնամ ըսել թէ ե՛ւ միութիւն եւ բեմադրիչին այս գործը խիզախութիւն կը նկատեմ երբ բոլորովին նորերով եւ սիրողներով բեմ կը բարձրացնեն Քարաճիալի «Կորսուած Նամակը» բէտը, որ ըստ երեւոյթին մարդոց միայն երէկին համար չէ գրուած, մէկ ժողովուրդի համար չէ գրուած, այլ գրուած է բոլոր ժողովուրդներու վաղուան համար նաեւ:

Այսպէս բեմ հանել 15 հոգի որպէս դերասան որպէսզի անոնք ամիսներով արտասանեն իրենց յատկացուած բաժինը ու բեմէն ապրումով տան այդ բոլորը, անշուշտ շնորհաւորելի գործ է:

Ու անհրաժեշտ է ըսել, որ դերասանները, առանց բացառութեան յուշարարի պէտք չունեցան, լաւ սորված էին իրենց բաժինները:

Անշուշտ բեմ բարձրացող 15 հոգիներու կողքին մոռնալու չենք այս միւսները որոնք չերեւցան բեմին վրայ բայց ոգին էին այս բեմադրութեան որպէս բեմավար՝ Արշօ Աւագեան, յուշարար՝ Անի Թիւմթիւմեան, տէքօրի իրագործում՝ ձորճ Գարավարդանեան եւ Յակոբ Խորլարեան, ձայնի պատասխանատուն, աֆիշ, տոմս յայտագիր՝ Մարտիկ Տօլմաճեան եւ ընդհանուր պատասխանատուն՝ Բժիշկ Օհան Այնթապեանը:

Ասոնք որպէս անձանօթ գիւնուոր բայց ծանօթ իրենց գործով:

Այս բիւտիկ մէջ գլխաւոր դերը վերցուցած էր ձորճ Այնթապեանը: Թէեւ պէտք է ըսել որ բեմին վրայ ոչ գլխաւոր դեր չկայ: Իսկ ձորճ Այնթապեանը թէեւ կրցաւ արժեցնել իր քաղաքապետի դերը, բայց ուրիշին կնտջ սիրահարելու դերին մէջ պէտք եղած աքթիւուութիւնը ցոյց չտուաւ, լաւ

սիրահար մը չէր, կամ կ'երեւի կամչնար կատարելու այդ դերը:

Յովիկ Զրենցեանը լաւ կատարեց իր գիւնուորի՝ դերը:

Նուպար Տօլմաճեանը համակշարժում, պտիկ մը համբերութիւն սպասող կեղերոնական դէմքը եղաւ գործին: Զանի Նազարեանը պիտի ուզէինք որ շարունակէր իր բեմերը որովհետեւ ունի կարելիութիւնը գորացնելու «Անդրանիկ» թատերախումբը:

Ստեփան Արուշեանը նոր մը չէ, ան գիտէ թէ որուն պիտի տայ իր քուէն, բայց միշտ այդ հարցով հանդէս եկաւ լաւագոյն սպաւորութիւնը թողով հանդիսատեսներուն վրայ: Արդեօք Ստեփանը, ատով հանդերձ չի կարծեր, որ տեղեւտեղ չափազանցեց:

Սամիկ Նաճարեանն ու Խաչիկ Մամբուրեանը իրենց դերին մէջ պաշտպանեցին իրենց դերերը ծիծաղարթեցնելով ներկաներուն մէջ:

Յակոբ Աւագեանը կրնար քիչ մը գուսպ ըլլալ իր շարժումներուն մէջ: Գնահատելի էր Ալինա Պիք-մէջլեանը թէեւ մերթ իր ձայնը չէր հասնէր սրահի վերի ներկաներուն:

Գէորգ Գազանճեանն ու Մկօ Գէթնճեանը լաւ պաշտպաններ էին ինչպէս նաեւ Լեւոն Պէքեարեանն ու Սիմոն Համմասեանը:

Հայկ Աբրահամեանը հակառակորդ խումբերուն վախ պատճառողն էր իր բարձր հասակով:

Իսկ Յակոբ Նարինեանը կատարեալ ճառախօս մը, որ կը ջանար ըմբերանել իր հակառակորդը ու կրցաւ:

Կորսուած Նամակը գտնուեցաւ վարկաբեկումէ ազատելով գլխաւոր հերոսները:

Պիտի ուզէինք որ շնորհաւորելէ ետք այս խումբը, ըսել, որ «Անդրանիկ» թատերախումբը պէտք ունի աւելի յաճախ երեւնալու բեմի վրայ, գորացնելու համար խումբին վարպետութիւնը:

Ինչպէս դաշնակահար մը կամ ջութակահար մը ամէն օր պէտք է նուագէ, գրող մը՝ ամէն օր գրէ, այդպէս ալ թատրոնի մարդը ատենը հեղ մը, գէթ տարին մի քանի անգամ բեմ պէտք է բարձրանայ, այլապէս բեմը կը նեղուի իրմէ:

Նոյն առաջարկը նմանապէս բեմադրիչ՝ Կարպիս Լեճեճեանին: Իր գործերը աւելի յաճախ կ'ուզենք տեսնել:

«Անդրանիկ» թատերախումբը՝ Զօր. Անդրանիկին պէս պէտք է ըլլայ:

ՀԱՅ ԲՈՅՐԵՐՈՒ ՎԱՐժԱՐԱՆԻ 2008-Ի ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Շարունակուած էջ 14-էն

րուն ըսաւ. «...Գացէք շարունակեցէք ձեր ուսումը եւ նուաճեցէք նոր բարձունքներ, բայց անպայման վերադարձէք եւ վերադարձուցէք բաժին մը ձեր դպրոցին, ձեր համայնքին եւ ձեր հայրենիքին»:

Դաշնակի վրայ նուագեց շրջանաւարտ վարդի Պոյաճեան, ապա ուղերձներ կարդացին անգլերէն լեզուով Արի Գազանճեան եւ հայերէն լեզուով Խարիս Ռոստոմեան: Յայտագիրը շարունակուեցաւ աւարտական աշակերտներու կողմէ ներկայացուած գեղարուեստական պատշաճ յայտագրով, իսկ ընդմեջներու եւ ներկաներու ծափողջոյններն ու արցունքները: Հանդիսութեան տեւողութեան դաշնակի վրայ կը նուագէր եւ երգերը կը ղեկավարէր երաժշտութեան ուսուցչուհի՝ տիկ. Վարդուհի Պաղտասարեան:

2008ի ՀՕՄ-ի Թալին մասնաճիւղի կողմէ կրթաթոշակները տրուեցան Նազօ Տէմիրճեանին եւ Յարութ Գիրգորեանին: Առաջին անգամ ըլլալով Քրեանդա հովիտի «Ձաւարեան» ՀՅԴ կոմիտէութիւնը հաստատեց \$500 տոլարի կրթաթոշակ մը հայ լեզուի հանդէպ հետաքրքրութիւն ցուցաբերող եւ հայկական նիւթերու մէջ լաւագոյն նիշերը ապահովող աշակերտներուն: Վարժարանի տնօրէնութիւնն ու Հայկական բաժանմունքը սիրով ընդունեց այս որոշումը եւ գումարը բաժնելով չորսի գայն տրամադրեց 2008 Ապրիլին «Արարատ» Տան մէջ կայացած Հայոց Պատմութեան հարց պատասխանի մրցումին մասնակցող աշակերտներուն՝ վարդի Պոյաճեանին, Անճեւա ժամկոչեանին, Նազօ Տէմիրճեանին եւ Լեւոն Շիշոյեանին, որոնք երկրորդ տեղը գրաւած էին: Կրթաթոշակները աշա-

կերտներուն յանձնուեցաւ «Ձաւարեան» կոմիտէութիւնը ներկայացնող Տիար Օննիկ Հայրապետեանի կողմէ: Հայ Քոչըրքու վարժարանի մեծ ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ «Ձաւարեան» կոմիտէութեան եւ ՀՕՄի «Թալին» մասնաճիւղի վարչութեան, իրենց ուսանելի կեցուածքին համար:

Վկայականաց բաշխումէն առաջ բեմ հրաւիրուեցաւ շրջանաւարտներէն Տանիք Թաշճեանի մեծ հայրը՝ Դոկտ. Մեսրոպ Ա. Քհնյ. Թաշճեան: Ան շնորհակալութիւն յայտնեց Հայ Քոչըրքու վարժարանի տնօրէնութեան, ուսուցիչներուն, որոնք ամէն ջանք ի գործ կը դնեն վարժարանը վերածելու իսկական հայակերտման դարբնոցի: Ան շնորհաւորեց շրջանաւարտները եւ թելադրեց որ հայ լեզուն միշտ անաղարտ պահեն:

Շրջանաւարտները 11 տարիներու աշխատանքէ, նախապատրաստութենէն վերջ՝ լիցքաւորուած անհրաժեշտ գիտելիքներով, սպարազինուած՝ ազգային, կրօնական դաստիարակութեամբ, հրաժեշտ տուին մանկութիւն մը ամբողջ պարբակող վարժարանին, մեկնելու դէպի տարբեր միջավայրեր եւ տարբեր երկրորդական վարժարաններ: Անոնք կանգնած էին նոր արեւածագի մը դիմաց, իրենց շրջանաւարտի գլխարկները մէկ կողմ թողած՝ կ'ուղղուէին դէպի աղբիւրը լոյսին:

Կը շնորհաւորենք բոլոր շրջանաւարտները, ինչպէս նաեւ ծնողներն ու դաստիարակները, որոնց համագործակցութեամբ խումբ մը հայորդիներ եւս պատրաստ են սկսելու ուսմանական նոր շրջան մը: Մեր մաղթանք է որ բոլոր շրջանաւարտները յարատեւ եւ աննկուն կամքով հասնին կատարեալին:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...
Մեծ ժողովրդականութիւն վայելող
Կլէմտէլի AMGA 280-րդ Ալիքը
Այժմ Կը Սփռուի
GlobeCast
Արբանեակային Հեռատեսիլով
Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի
Ամբողջ Տարածքին
Դուք Կրնաք Դիտել
Հայաստանեան Լուրեր - Քաղաքական Վերլուծութիւններ
Երաժշտական Հաղորդումներ - Եւայլն
Մանրամասնութիւններու Համար
Հեռաձայնել 818.547.9696

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ԱՆՈՅԵԱՆ «ՓԻՆԻԿ»Ի 2-ՐԴ ԱՆԸՆԴՍԷՋ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Ֆուտբոլի Հայաստանի առաջնությունում կայացան 12-րդ տուրի հանդիպումները: Կենտրոնական էր համարում «Միկա» - «Արարատ» հանդիպումը, որ կայացավ «Միկա» մարզադաշտում:

Մրցաշարային աղիւսակի առաջին երկու հորիզոնականներում գտնուող այս թիմերի մրցավեճում առաջինը յաջողութեան հասան տանտէրերը: Սակայն 10 րոպէ անց «Արարատ»ը հաւասարեցրեց հաշիւը: Գոլառատ մեկնարկից յետոյ, սակայն, հանդիպումն աւարտուեց 1:1 հաշուով:



Մեծ անակնկալ գրանցուեց «Բանանց» մարզադաշտում, որտեղ ետնապահ «Կիլիկիա»ն մրցեց մինչ այս խաղում անընդմէջ յաջողութեան հասած «Բանանց»ի հետ: 24-րդ րոպէին գնդակ ընդունելով սեփական դարպասը՝ «Բանանց»ը ողջ կազմով նետուեց առաջ եւ միայն 88-րդ րոպէին դաշտի տէրերը հաւասարեցրին հաշիւը:

Անակնկալ մատուցեց նաեւ Կապանի «Գանձասար»ը, որ սեփական յարկի տակ 1:0 հաշուով առաւելութեան հասավ ախոյեան «Փիւնիկ»ի նկատմամբ:

Սեփական յարկի տակ հանդիպումները անցկացնելու իրաւունք գրկուած «Շիրակ»ը Ոսկեհատում մրցեց «Ուլիս»ի հետ: Այս հանդիպումին դարպասի գրաւում չարձանագրուեց:

Ֆուտբոլի Հայաստանի առաջնությունում կայացան 8-րդ տուրից յետաձգուած հանդիպումները: Ախոյեան «Փիւնիկ»ը 2-րդ անընդմէջ պարտութիւնը կրեց այս անգամ 0:1 հաշուով պարտուելով «Ուլիս»ին:

Առաջատար «Արարատ»ը մեծ դժուարութեամբ առաւելութեան հասավ ետնապահ «Կիլիկիա»ի նկատմամբ 1-0 հաշուով: «Բանանց» - «Գանձասար» հանդիպումը աւարտուեց 1:1 հաշուով:

	Խաղ	Ցաղ.	Հաւ.	Պարտ.	Կօլ	Կէտ
«Արարատ» Երեւան	12	9	2	1	22-9	29
«Միկա» Աշտարակ	10	6	3	1	16-7	21
«Փիւնիկ» Երեւան	11	5	3	3	10-6	18
«Բանանց» Երեւան	11	5	3	3	13-8	18
«Գանձասար» Կապան	12	4	3	5	15-15	15
«Ուլիս» Երեւան	12	4	1	7	9-10	13
«Շիրակ» Գիւմրի	12	3	2	7	7-15	11
«Կիլիկիա» Երեւան	12	1	1	10	7-22	4

ՈՒԵՖԱ-Ի ՄՐՑԱՇԱՐՔԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՒՄԲԵՐՈՒ ՄՐՑԱԿԻՑՆԵՐԸ

Շուէյցարական Նիոն քաղաքում տեղի ունեցավ ՈՒԵՖԱ-ի Ախոյեանների լիգայի 2008-09թթ. խաղարկութեան որակաւորման առաջին փուլի վիճակահանութիւնը: Հայաստանի ախոյեան «Փիւնիկ»ը այս մրցաշարում կը մրցի Կիպրոսի ախոյեան «Անորտոսիս Ֆամագուստայի» հետ:

«Փիւնիկ»ի եւ «Անորտոսիս»ի միջեւ կայանալիք առաջին հանդիպումը տեղի կ'ունենայ Յուլիսի 15-16-ին Լաոնաքայի Անտոնիս Պապադոպոլոսի անունով մարզադաշտում: Պատասխան հանդիպումը կը կայանայ Յուլիսի 22-23-ին Երեւանի «Միկա» մարզադաշտում, քանի որ Վազգէն Սարգսեանի անունով «Հանրապետական» մարզադաշտը ներկայումս նորոգւում է:

Որակաւորման առաջին փուլի արգելքը յաղթահարելու դէպքում «Փիւնիկ»ի մրցակիցը կը լինի Աւստրիայի ախոյեան «Ռապիդ»:

ՈՒԵՖԱ-ի գաւաթի խաղարկութեան որակաւորման առաջին փուլի վիճակահանութեանը յայտնի դարձան Երեւանի «Բանանց»ի եւ «Արարատի» մրցակիցները:

Վիճակահանութիւնը բարեյաջող կարելի է համարել «Արարատ»ի համար, որի մրցակիցը կը լինի շուէյցարական «Բեյրնզոնա» թիմը:

«Արարատ»ը շուէյցարական թիմի հետ առաջին հանդիպումը կ'անցկացնի Յուլիսի 17-ին Երեւանի «Միկա» մարզադաշտում: Պատասխան հանդիպումը կը կայանայ Յուլիսի 31-ին Բեյրնզոնայի քաղաքային մարզադաշտում:

«Բանանց»ի մրցակիցը աւստրիական «Չալցբուրգ» է, որը անհամեմատ հեղինակաւոր մրցակից է, լաւագոյններից մէկը Աւստրիայում: Աւստրիայի 2007-08թթ. առաջնութիւնում այս ակումբը գրաւել է 2-րդ հորիզոնականը:

Առաջին հանդիպումը «Չալցբուրգ»ի հետ «Բանանց»ը կ'անցկացնի Յուլիսի 17-ին Չալցբուրգի «Վալս Զիցենհայմ» մարզադաշտում, որ տեղաւորում է 31 հազար հանդիսական: Պատասխան հանդիպումը կը կայանայ Յուլիսի 31-ին՝ Երեւանում:

«ՄԻԿԱ» ԴՈՒՐՍ ՄՆԱՑ ԻՆՏԵՐՏՈՏՈՅԻ ԳՈՒԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻՑ

Երեւանի «Միկա»ն չկարողացավ յաղթահարել ինտերտոտոյի գաւաթի խաղարկութեան առաջին փուլի արգելքը: Հայկական ակումբը առաջին փուլի պատասխան խաղում Տիրասպոլում համանուն թիմի հետ մրցավեճն աւարտուեց 0:0 հաշուով:

Երեւանում կայացած առաջին խաղը եւս աւարտուել էր ոչ-ոքի, սակայն 2:2 հաշուով, ուստի պատասխան խաղում «Տիրասպոլին» բաւարարում էր նաեւ 0:0 կամ 1:1 հաշիւը: Իսկ «Միկա»ն, որին յաղթանակ էր անհրաժեշտ, առաջին կէսում բաւական ակտիւ է եղել, մի շարք գոլային հնարաւորութիւններ ստեղծել:

«ԵՈՒՐՕ 2008»-Ի ԱԿՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԻՆ ՍՊԱՆԻԱ - ԳԵՐՄԱՆԻԱ 1-0

Սպանիայի ֆուտբոլի ազգային հաւաքականը դարձաւ Եւրոպայի ախոյեան՝ «Եւրօ - 2008»-ի եզրափակիչ խաղում 1:0 հաշուով առաւելութեան հասնելով Գերմանիայի հաւաքականի նկատմամբ:



Վիեննայում կայացած հանդիպման միակ գոլը խփեց Ֆերնանդո Տորեսը՝ խաղի 33-րդ րոպէին:

Հանդիպման մեկնարկում աւելի ակտիւ էին գերմանացիները, որոնց գրոհները սակայն վտանգ չէին պարունակում իրենց մէջ: Փոխարէնը սկսեցին աւելի սուր գրոհել սպանացիները եւ առաջին անգամ գրոհեցին 23-րդ րոպէին, երբ Ֆեռնանդո Տորեսի գլխով կատարած հարուածից չետոյ գնդակը ետ մղուեց դարպասաձողից: 10 րոպէ անց Տորեսն առաջ անցնելով Ֆիլիպ Լամից մեն-մենակ յայտնուեց Լեմանի դէմ եւ գրաւեց գերմանացիների դարպասը: 2-րդ կէսում սպանացիները աւելի մօտ էին յաջողութիւնը զարգացնելուն, քան՝ գերմանացիները հաշիւը հաւասարեցնելուն: Սպանիան արժանիորէն յաղթեց 1:0 հաշուով եւ 44 տարի անց կրկին դարձաւ լաւագոյնն Եւրոպայում:

Սպանիան երկրորդ անգամ է դառնում Եւրոպայի ախոյեան. առաջին անգամ դա տեղի էր ունեցել 1964 թուականին: 1984 թուականին սպանացիները դուրս էին եկել Եւրոպայի առաջնութեան եզրափակիչ, որտեղ Ֆրանսայի հաւաքականից պարտութիւն էին կրել 0:2 հաշուով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ 4 ՊԱՏԱՆԻ ԲՈՆՑՔԱՍԱՐՏԻԿՆԵՐ ՆՈՒԱՃԵԼ ԵՆ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼՆԵՐ ԵՐՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ

Պուլկարիայի Պլովդիւ քաղաքում անցկացուած բռնցքամարտի Եւրոպայի պատանեկան առաջնութիւնում Հայաստանի չորս բռնցքամարտիկներ դարձել են պրոնզէ մրցանակակիրներ: Յովհաննէս Բոչկովը (46 կգ, Գյումրի), Նարեկ Աբգարեանը (48 կգ, Երեւան), Արթուր Քիրաջեանը (57 կգ, Երեւան) եւ Պօղոս Աղիբեկեանը (75 կգ, Աբովեան): Հայաստանի բռնցքամարտի պատանեկան հաւաքականի գլխաւոր մարզիչն է Ֆեդյա Յարութիւնեանը:

ԸՍԲՇԱՍԱՐՏԻ ԵՐՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՔԵՐՏ ԴԱՐԻԲԵԱՆԸ ՊԱՐԳԵԻՍՐՈՒԵՑ ՈՍԿԷ ՄԵՏԱԼՈՎ

Յունիսի 30-ին Լաթիայի Դաուգավայլիս քաղաքում աւարտուեցին ազատ եւ յունահռոմէական ոճի ըմբշամարտի Եւրոպայի պատանեկան առաջնութիւնները:

Հայաստանը առաջնութեանը ներկայացրել էր 8 ըմբշ, որոնցից միայն մէկին յաջողուեց կանգնել պատուոյ պատուանդանին:

Յունահռոմէական ոճի ըմբշ Ռոբերտ Ղարիբեանը (65 կգ) իր օգտին միայն յաղթանակներ գրանցեց, գրաւեց 1-ին տեղը եւ պարգեւատրուեց ոսկէ մետալով:

ՃՈՒԴՈՒՍԸ ՍԵՐԳԷՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ ԻՍՐԱՅԷԼԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՅԱՂԹՈՂ

Յունիսի 30-ին Իսրայէլի Հայֆա քաղաքում աւարտուեց միջազգային պատանեկան մրցաշար՝ «Ճուղոն յանուն խաղաղութեան» նշանաբանով: Մարգաձեւի միջազգային ֆեդերացիայի նախաձեռնութեամբ անցկացուած միջոցառմանը մասնակցեցին 10 երկրների աւելի քան 200 ներկայացուցիչներ:

Հայաստանը ներկայացրած 6 մարզիկներից յաղթողի կոչմանն արժանացավ Սերգէյ Յովհաննիսեանը (60 կգ, Երեւան, «Միկա» ակումբ): Նորայր Գալոյեանը (+90 կգ, Վանաձոր, «Հայաստան» մարզական միութիւն) գրաւեց 2-րդ, Իսկ Դաւիթ Նիկողոսեանը (50 կգ, Երեւան, «Հայաստան» մարզական միութիւն)՝ 3-րդ տեղը:

ՔԱՋ ՆԱՉԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
Ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 280-րդ կայանից

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԳ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ
ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
 CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ
 (ԿԼԵՆՏԷՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆՈՒ)
 GLOABCAST SATELLITE
 ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆ 10:00-11:00

ՎԱՂԱՄԵՌԻԿ ՆԺԴԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԲԱՌԱՍՆՕՐԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Մարդկային կեանքը ժամանակակառու է հողագնդի վրայ, անժխտելի իրականություն, ուշ թէ շուտ գնալու ենք, որեւէ մի փախուստ գերբնական տնօրինությունից, նա սուտերի պէս հետեւում է իւրաքանչիւր մարդարարածին, որպէսզի անակնկալի չգանք մահաւան վերահաս հանդիպումից, պէտք է մեր կեանքը շահենք ապրելով ըստէսերը՝ մեր բարի արարքներով, թէ անձը պայծառացնելով եւ լուսաւորելով եւ թէ՛ սրտեր գրաւելով մեր առաքինի վարքով ու ծառայութեամբ:

Մեր աշխարհային կեանքից անսպասելիորէն հեռացած հանգուցեալ Նժդիկը մէկն եղաւ մարդկային ազնիւ բարեմանություններով զարդարած ու օժտած: Նա իր կեանքի 37 տարիների կարճ ժամանակահատուածում հասցրել էր անխոնջ աշխատանքով ու անձնական ունակություններով ձեռնահաս լինել համալսարանական բարձրագոյն ուսման, աշխատանքի պատուաւոր աստիճանին, նիւթական ապահով վիճակին եւ ամուսնական ընտանեկան օջախին:

Անողորմ մահը չխղճաց նրա երիտասարդութեան, փարթամ ու փթիթած ծառի պողաւորման, դեռ կեանքի երիտասարդ եւ խոստումնալից հասակում, ապագայի հեռանկարների եւ իղձերի իրականացման վառ յոյսերի ճամբին նրան խլեց ու ընդմիջտ տարաւ խոր սուզի մատնելով ընտանեկան պարագաներին, իր սիրատուն մօրը, հարազատներին եւ Գրիգորեան գերդաստանի բոլոր անդամներին:

Գրիգորեան ընտանիքի կրտսերագոյն գաւակն էր Նժդիկը՝ երկու եղբայր եւ երեք քոյր: Նա օջախի սիրելին էր՝ իր բարեհոգութեամբ, խելացութեամբ, գիտակցութեամբ, հոգեկան գեղեցիկ յատկություններով եւ ընդունակություններով: Նա ծնւել էր 1970 թվականի Մայիս 14-ին Թեհրանում: Տարրական ուսումն ստանում է՝ «Թունեան», ուղեցոյցը՝ «Նայիրի», միջնակարգը՝ «Աբրահամ Սողոմոնեան» միջնակարգ դպրոցներում: Նա բացառիկ ու շիջութեամբ եւ աշխատասիրութեամբ օժտւած աշակերտ էր, ջանասիրութեամբ սովորում էր դպրոցական դասերը եւ խղճմտանքով ու հոգատարութեամբ կատարում էր ուսուցիչների պատէրները, 1988 թվականին գերագանց նիշերով աւարտում է միջնակարգը եւ արժանանում է շրջանաւարտի վկայականին: Նա սերած էր Շահ Աբասեան բռնագաղթի ընտանեկան շառաւիղից ժառանգելով հայկականութեան հաւատարիմ համոզումներով:

Իրանի իսլամական յեղափոխութեան պատճառով երիտասարդութեան մէջ երկրից արտագաղթելու ցանկություններ է առաջանում՝ ապագան անորոշ նկատելով: Վաղամեռիկ Նժդիկն էլ այլոց պէս 1991 թվին առանձինը Եւրոպայի ճամբայով հաստատւում է Միացեալ Նահանգների Սանֆրանսիսկօ քաղաքում մեծ եղբոր Շահիկի մօտ: Հետագային մայրը՝ այրիացած տիկին Մարիամն եւս միանում է որդիներին:

1994 թվին Թեհրանում Նժդիկի հայրը 57 տարեկան հասակում աւանդում է իր հոգին, յիշարժան արժանիքներով Աբրահամը: Հօրը կորցրած Նժդիկը յուզւած ու փլուած սրտով Ամերիկայից գալիս է Թեհրան մասնակցելով հօր թաղման ու յուղարկւորութեան: Անազրոյց մահը նաեւ 34 տարեկանում իլում է



Նժդիկի մեծ եղբոր՝ Շահիկի կեանքը, 1995 թվին, այս երկու իրար յաջորդող ցաւալի մահերը խորապէս ազդում են ընտանիքի վրայ:


Վաղամեռիկ Շահիկը նոյնպէս շնորհալի էր, նա համալսարանաւարտ էր՝ PH.D իմրնալոթի մասնագիտութեամբ: Նա եւս երիտասարդ տարիքում դեռ իր ներդրութեանց պտուղը չվայելած հեռանում է կեանքից պիտոսանքի դառն կակիծի մատնելով ընտանեկան կազմին: Բայց ինչ արած պէտք էր ընդունել կատարածը, մահը իր ճամբով, կեանքը իր ճամբով, ուստի կեանքը շարունակում է երկու արժէքաւոր կորուստ տւած ընտանիքում: Այսպիսի ողբալի կորուստներով ընտանիքում Նժդիկը չի յուսալքւում, աւելի գօտեպնդւած իր հօր եւ եղբոր յիշատակը պանծացնելու նպատակով շարունակում է իր ուսումը, մեծ ճիգերով աւարտում է բարձրագոյն, Սանմաթիոյ եւ Սանհոգէ համալսարաններից վկայում է՝ էլէքթրիքայլ էնձիններին մասնագիտութեամբ որպէս ճարտարագէտ: Նա մի որոշ ժամանակ զբաղւում է իր մասնագիտութեամբ, սակայն յառաջադիմութեան ընթացքը ոչ բաւարար նկատելով աշխատանքի է անցնում՝ Mr. Bob Buck- ի ամենատարած Ֆունկցալ Բանդ Թէյքէյ մասնաճիւղերից մէկի աշխատանքին որպէս ընդհանուր կառավարիչ: Mr. Buck-ը այնքան սիրում եւ վստահում է Նժդիկին, որին իր սեփականատիրութեան բաժնեկից է դարձնում: Կարճ ժամանակամիջոցում Նժդիկը նախանձելի յառաջընթաց է ունենում եւ այդ աշխատանքի բնագաւառում մեծ ճանաչումի ու նիւթապէս ապահով վիճակի է հասնում: Նրա մէջ ընտանիք կազմելու սէր է ծագում, նա ամուսնանում է՝ Թանիայի հետ 2006 թվականին: Նա Բախտաւորութեամբ է աղջիկ գաւակով՝ անւանակոչելով Ֆրոնա: Երեխայի ծնունդով Նժդիկը մեծապէս երջանիկ է գգում իրեն, հոգեպէս կապւում է մարալիկ աղջնակին նրան իր կեանքի բարձրագոյն գանձն ու սէրն համարելով, սակայն աւաղ այդ երջանկությունը կարճ է տեւում... Երեխայի հեռաւորութիւնը խորապէս ազդում է Նժդիկի ապառոջ վիճակին: Նա կարճ ժամանակում հիւանդութեան անկողնում աւանդում է հոգին 2008 թվականի Յունիս 10-ին, Երեքշաբթի օր:

Տարաբախտ Նժդիկի յուղարկւորութիւն-թաղումը տեղի է ունենում Յունիս 16-ին Holleywood-ի Forest Lawn գերեզմանատանը հոծ թւով յուղարկւորների ներկայութեամբ:

Արդարեւ Նժդիկի անժամանակ մահը մեծ կորուստ էր, ինչպէս պիտի պիտի մօրը եւ հարազատներին, շատ դժւար է եւ անչափելի, միայն ու միայն Աստուծոց ցանկանանք համբերութիւն եւ միտթարութիւն:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

ՄԱՐԱԶԴ



ԺՈՂՔՅ ՍԱՂՏՃԵԱՆ (Ծնեալ՝ 1939ին, Քէսապ)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր եւ հարազատին՝ ԺՈՂՔՅ ՍԱՂՏՃԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Շաբաթ, Յունիս 28, 2008ին, յետ կարճատեւ հիւանդութեան: Յուղարկւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Հինգշաբթի, Յունիս 3, 2008, առաւօտեան ժամը 9:30ին, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, 500 S. Central Ave., ապա թաղումը՝ Forest Lawn Hollywood Hills գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝ Այրին՝ Շաքէ Սաղտճեան Դուստրը՝ Նայիրի եւ Սամ Գասաճիկեան եւ զաւակները՝ Յարութ եւ Լարա Զաւակները՝ Սեւակ եւ Ալին Սաղտճեան եւ զաւակը՝ Շահէ Հրայր Սաղտճեան Քոյրերը՝ Պերճուհի Կարապետեան եւ զաւակները Ալիս Քէհէյեան եւ զաւակները (Լիբանան) Սօնա եւ Վազգէն Միքայէլեան եւ զաւակները (Լիբանան) Սիրուն եւ Մովսէս Պասմաճեան եւ զաւակները (Տիթրոյթ) Եղբոր զաւակը՝ տէր եւ տիկ. Յարութ Սաղտճեան եւ զաւակները (Սուրիա)

Հարազատները՝ տէր եւ տիկ. Կարապետ Կարապետեան եւ զաւակները Տէր եւ տիկ. Յարութ Եղիկեան եւ զաւակները էլօ Եղիկեան Տէր եւ տիկ. Նազարէթ Տէր Պօղոսեան եւ զաւակները Տէր եւ տիկ. Ճորճ Մանճէրեան եւ զաւակները Տէր եւ տիկ. Սուշեղ Եղիկեան եւ զաւակները Խնամիները՝ Յարութիւն եւ Սիրվարդ Գասաճիկեան Օհաննէս եւ Ժագլին Սերօրեան եւ համայն Գասաճիկեան, Սերօրեան, Բրուտեան, Սաղտճեան, Թրթուեան, Կարապետեան, Հանիմեան, Գալալճեան, Տէր Պօղոսեան, Մանճէրեան, Մինասիսեան, Քոշարեան, Մինասեան, Մարգարեան, Յովսէփեան ընտանիքներն ու հարազատները:

Փոխան ծաղկեպակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Քէսապի Հայրենակցական Միութեան կամ Քրեւէնթա Հովիտի Հայոց Առաքելական եկեղեցոյց:

ՅԱԲԱԿՑՈՒԹԻՆ

ՇԱՔԻ ԽԱՆԶԱՏԵԱՆ-ՊԱՐՍՈՒՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Հայկ) մեր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնենք վեթերան Հ.Մ.Մ.-ականի դատեր եւ ընտանեկան համայն պարագաներուն, ի մասնաւոր իր քրոջ Տիկ. Էոթէնի Պարսումեանին: Հ.Մ.Մ.-ի վարչութիւն

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly Enclosed a check for (one year) * \$50,00 for USA * \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada. * \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

Գրառուած Թուական Mark Your Calendars

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՕՆ

Սեպտեմբեր 21, 2008

SUNDAY	MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY	SATURDAY
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22			25	26	27
28	29	30				

Armenian Independence Day FESTIVAL

**To reserve your booth
please call Nor Serount Cultural Association**

Ձեր կրպակները ապահովելու համար

Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան

(818) 391-7938